Հ ԱՍ Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ընդհանուր ժողովի

19 նոյեմբերի 2025թ.- ի թիվ 2025/11-01 որոշմամբ

Ժողովի նախագահ՝ Միքայել Մարգարյան

# ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ ՓԲԸ<br>ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բաժին 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 4
1.1. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ..... 4
1.2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ..... 6
Բաժին 2. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 13
2.1. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ ..... 13
2.2. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԵՏԿԱՆՉՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ..... 15
2.3. ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 18
2.4. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ..... 18
2.5. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ ..... 21
2.6. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ..... 22
Բաժին 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 26
3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 26
3.2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԻ ՀԱՇՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ..... 27
3.3. ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ..... 29
Բաժին 4. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ..... 31
Բաժին 5. ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ..... 32
Բաժին 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 34
Բաժին 7. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ,ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ..... 39
Բաժին 8. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 44
8.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 44

8.2. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 44
8.3. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 45
Բաժին 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 46
Բաժին 10. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ ........ 49
Բաժին 11. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ........ 50
Բաժին 12. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ........ 50
Բաժին 13. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ........ 54
Բաժին 14. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ........ 54
Բաժին 15. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ........ 55

# Բաժին 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1.1. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1.1.1. «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է ներդրումային ընկերություն, լիցենզավորված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:
Սույն՝ «Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման կարգով և պայմաններով» (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Ընկերության կողմից բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման կարգը, կանոնները, պայմանները, ընթացակարգերը, Հաճախորդի և Ընկերության իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

1.1.2. Պայմանները մշակվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջների համապատասխան:

1.1.3. Սույն Պայմանները հանդիսանում են Հաճախորդի հետ կնքվող Պայմանագրի ընդհանուր պայմանները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը և կիրառվում են կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

1.1.4. Պայմանագիրը (ներառյալ՝ Դիմում-Պայմանագիրը, Պայմանները և Սակագները), մասնավորապես՝ Պայմանները, հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված) բացառապես Ընկերության կողմից Հաճախորդին պատշաճ նույնականացնելուց, Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պահպանման ընթացակարգի» և այլ ներքին իրավական ակտերի համաձայն գործընթացների արդյունքում Ընկերության կողմից Հաճախորդի դիմումն ընդունելու դեպքում:

1.1.5. Հաճախորդը Ծառայությունները ստանալու նպատակով Ընկերությանը տրամադրում է Դիմում-պայմանագիրը՝ սույն Պայմանների Հավելված 4-ով սահմանված ձևով փաստաթուղթ տրամադրելու կամ Կայքի միջոցով Հավելված 4-ով սահմանված տեղեկատվությունը տրամադրելու միջոցով:

1.1.6. Դիմում-պայմանագիրը Ընկերություն ներկայացնելու պահից Հաճախորդը համաձայնում է սույն Պայմաններին միանալուն և ակցեպտավորում է սույն Պայմանները, և Պայմանագիրը համարվելու է կնքված Ընկերության կողմից 1.1.4.-րդ կետում սահմանված ընթացակարգերի արդյունքում ծառայության մատուցումը հնարավոր համարելու դեպքում՝ առանց իր կողմից հավելյալ համաձայնության կամ գործողության անհրաժեշտության:

1.1.7. Ֆիզիկական անձ հաճախորդը կարող է Դիմում-պայմանագիրը տրամադրել նաև Կայքի միջոցով:

1.1.8. Ընկերությունը, 1.1.4.-րդ կետում սահմանված ընթացակարգերի արդյունքում ծառայության մատուցումը հնարավոր համարելու դեպքում հաստատում է Հաճախորդի դիմումը՝ ուղարկելով Հաճախորդին Ընկերության կողմից կնքված Դիմում-Պայմանագիրը:

1.1.9. Ընկերությունը ծառայության մատուցումը մերժելու պարագայում Հաճախորդին իր Դիմում-Պայմանագրում նշված ծանուցման եղանակներից մեկով ծանուցում է Դիմում-պայմանագիրը չընդունելու վերաբերյալ:

1.1.10. Պայմանները հրապարակման ենթակա փաստաթուղթ են և հասանելի են Ընկերության ողջ անձնակազմին և բոլոր Հաճախորդներին: Պայմանները տրամադրվում են Ընկերության Հաճախորդներին, ինչպես նաև տեղադրվում են Ընկերության գրասենյակում և Կայքում:

1.1.11. Հաճախորդի հետ Ընկերության Գլխավոր տնօրենի համաձայնությամբ կարող է կնքվել լրացուցիչ համաձայնագիր, որտեղ Կողմերը կարող են նախատեսել հատուկ պայմաններ, որոնք լրացնում կամ փոփոխում են սույն Ընդհանուր Պայմանների դրույթները: Այդպիսի հատուկ պայմանների և սույն Ընդհանուր Պայմանների միջև որևէ անհամապատասխանության կամ հակասության դեպքում հատուկ պայմանները կունենան գերակա ուժ՝ այդ անհամապատասխանության կամ հակասության մասով: Սույն ընդհանուր Պայմանների մյուս դրույթները կշարունակեն գործել ամբողջությամբ:

1.1.12. Դիմում-Պայմանագիրը տրամադրվում է, իսկ Լրացուցիչ համաձայնագրի առկայության դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիրը կնքվում է ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում կամ իրավաբանական անձի անունից լիազորված անձի կողմից՝ պատշաճ ձևով ձևակերպված լիազորագրի առկայության դեպքում:

1.1.13. Պայմանագիրը կնքվում է հայերեն: Ընկերության համաձայնությամբ Հաճախորդը կարող է Դիմում-Պայմանագիրը Ընկերությանը տրամադրել հայերեն լեզվի հետ մեկտեղ անգլերեն կամ ռուսերեն լեզվի զուգորդմամբ (ձևը տրամադրում է Ընկերությունը): Հաճախորդին ի գիտություն կարող են տրամադրվել Պայմանների ռուսերեն կամ անգլերեն տարբերակները, սակայն բոլոր դեպքերում Հաճախորդը Պայմաններին միանալիս ընդունում է Պայմանների հայերեն տարբերակի գերակայությունը:

1.1.14. Ընկերությունը ծառայությունները մատուցում է առաջնորդվելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, իր ներքին իրավական ակտերով, համապատասխան ծառայությունների դեպքում՝ «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ կանոններով:

## 1.2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1.2.1. Պայմաններում օգտագործվող հետևյալ հասկացությունները ունեն հետևյալ իմաստը.

1.2.1.1. **Ընկերություն** - «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ:

1.2.1.2. **Պայմաններ** - «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կողմից ընդունված սույն «Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման կարգը և պայմանները»:

1.2.1.3. **Դիմում-Պայմանագիր** – Հաճախորդի կողմից ծառայություններ ստանալու նպատակով Հավելված 4-ով սահմանված ձևով փաստաթղթի կամ Ընկերության Կայքի միջոցով լրացվող՝ Հավելված 4-ում պարունակող տեղեկատվության տրամադրում Ընկերությանը, որով Հաճախորդը ընդունում է և միանում է սույն Պայմաններին՝ Ընկերության կողմից Հաճախորդին պատշաճ նույնականացնելու, Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պահպանման ընթացակարգի» և այլ ներքին իրավական ակտերի համաձայն գործընթացների արդյունքում դիմումն ընդունելու դեպքում:

1.2.1.4. **Պայմանագիր** – Ընկերության կողմից Հաճախորդի Դիմում-պայմանագիրն ընդունելու արդյունքում Հաճախորդի հետ կնքվող պայմանագիր, որի անբաժանելի մասն են հանդիսանում Դիմում-պայմանագիրը, սույն Պայմանները և Սակագները:

1.2.1.5. **Գլխավոր տնօրեն** - Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:

1.2.1.6. **Տնօրինություն** – Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության կոլեգիալ գործադիր մարմին:

1.2.1.7. **Կայք**՝ www.cubeinvest.am դոմեյնի միջոցով հասանելի Ընկերության ինտերնետային էջը:

1.2.1.8. **Հաճախորդ** - Ընկերության հետ Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած (Պայմաններին միացած) անձ: Սույն պայմաններով նախատեսված Հաճախորդին վերաբերող դրույթները, Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև վերջինիս կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով լիազորված ներկայացուցչի նկատմամբ:

1.2.1.9. **Էլեկտրոնային առևտրային հարթակ** - գործակալների գործառնական կառավարման ներքո գտնվող Գործարքների կնքման հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (համացանցային) գործիք հանդիսացող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որին հասանելիության ապահովումը Հաճախորդին ծառայությունների

մատուցման տեխնիկական միջոց է և որի միջոցով Հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն գործողություններով կատարման փոխանցել գործարքների կնքման իրենց պատվերները ի կատարում:

1.2.1.10. **Գործընկեր կազմակերպություն** – իրավաբանական անձ, որի ներգրավմամբ և/կամ միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը ծառայություններ է մատուցում Հաճախորդին:

1.2.1.11. **Գործառնական օր** - ցանկացած աշխատանքային օրվա 10:00-ից 17:00, երբ Ընկերությունը իրականացնում է գործարքներ:

1.2.1.12. **Օրենք** – «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:

1.2.1.13. **Հանձնարարական** – կախված մատուցվող ծառայությունից՝ Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող և Հաճախորդի միջոցների հաշվին Ընկերության կողմից կատարման կամ Ընկերության կողմից երրորդ անձանց ի կատարում հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային հաղորդագրություն, որի նպատակը Հաճախորդի կողմից արժեթղթերի օտարումը կամ ձեռքբերումն է, ֆինանսական ածանցյալ գործարքների կնքումը կամ Ընկերության պահառության ծառայությունների շրջանակներում արժեթղթերով գործառնության իրականացումը, կամ միջոցների դուրսգրումը բրոքերային հաշվից իր հաշվին, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային հարթակում որևէ գործարք կնքելու ուղղված գործողությունն է՝ համաձայն համակարգի օգտագործման կանոնների:

1.2.1.14. **Արժեթղթերի հաշիվ** - Ընկերության կողմից բացված արժեթղթերի հաշվի տեսակ, որտեղ գրանցվում և հաշվառվում են Հաճախորդին պատկանող արժեթղթերը:

1.2.1.15. **Անվանատեր** - այն անձը, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը:

1.2.1.16. **Արժեթղթերի հաշվառում** - թողարկողների, նրանց թողարկած արժեթղթերի, արժեթղթերի գրանցված սեփականատերերի (Անվանատերերի) և նրանց պատկանող արժեթղթերի, ինչպես նաև արժեթղթերով իրականացված գործառնությունների վերաբերյալ տվյալների ստացում, գրանցում և պահպանում:

1.2.1.17. **Կարգավորվող շուկա** - Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող արժեթղթերի շուկա:

1.2.1.18. **Ընկերության ներքին իրավական ակտ** - Ընկերության կառավարման մարմինների կողմից հաստատված և Ընկերությունում պարտադիր բնույթ ունեցող փաստաթուղթ:

1.2.1.19. **Իրավասու ղեկավար** - Գլխավոր տնօրեն կամ Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կամ Գլխավոր տնօրենի հրամանով նշանակված իրավասու ղեկավար, որը իրավասու է Պայմանների առարկային վերաբերող որոշումներ կայացնել:

1.2.1.20. **Պատասխանատու աշխատակից** - Ընկերության աշխատակից, որը իրավասու է իրականացնել Պայմանների տվյալ կետում ներկայացված գործողությունը և/կամ գործառույթը:

1.2.1.21. **Առևտրային հարթակ կամ ԱՀ** - ցանկացած կարգավորվող շուկա և արժեթղթերի/ածանցյալ գործիքների առևտրի կազմակերպման համար ներգրավված այլ միջոց, կազմակերպություն կամ համակարգ, որը որոշակի կանոնների համաձայն ապահովում է արժեթղթերի առքուվաճառք և դրա արդյունքում փոխադարձ պարտավորությունների հաշվարկներ, քլիրինգ/զուտացում և վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ:

1.2.1.22. **Առևտրային հարթակի կանոններ կամ ԱՀԿ** - Ընկերության կողմից բրոքերային ծառայությունների մատուցման համար օգտագործվող Առևտրային հարթակի գործող ներքին կանոններ, ընթացակարգեր, քաղաքականություն, կարգադրություններ, կարգեր, որոնց կատարումը պարտադիր է այդ համակարգի անդամների կամ դրանից օգտվող այլ անձանց համար:

1.2.1.23. **Առևտրային նստաշրջան** - ժամանակահատված, որի ընթացքում ԱՀ կանոնների համաձայն տվյալ հարթակում տեղի է ունենում արժեթղթերի/ածանցյալների առևտուր:

1.2.1.24. **Օրական առևտուր**՝ Ֆինանսական գործիքներով գործարքի և դրան Հակադարձ գործարքի իրականացում Հաճախորդի կողմից տվյալ ԱՀ-ում միևնույն առևտրային նստաշրջանի ընթացքում:

1.2.1.25. **Գործակալ** - անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Ընկերությունը մատուցում է բրոքերային ծառայությունները Հաճախորդին:

1.2.1.26. **Գործարք** – արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով և արժույթով արտահայտված գույքային իրավունքների օտարման և ձեռքբերման գործարքներ, որոնք կատարվում են հանձնարարականների հիման վրա:

1.2.1.27. **Հակադարձ գործարք**՝ Ֆինանսական գործիքի առքի դեպքում՝ ձեռք բերված Ֆինանսական գործիքի նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) Ֆինանսական գործիքի վաճառք/օտարում, Ֆինանսական գործիքի վաճառքի դեպքում՝ օտարված Ֆինանսական գործիքի նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) ձեռքբերում/գնում:

1.2.1.28. **Գործարքի էական պայմաններ** - արժեթղթերի տեսակը և թողարկողը (կամ վերջինիս տարբերակիչ ծածկագիրը), գործարքի տեսակը (արժեթղթի առք, վաճառք, ածանցյալով Հաճախորդի իրավունքների իրականացման գործարք, բաժանորդագրության պատվեր, ռեպո, հակադարձ ռեպո), հանձնարարականով կատարման ծավալը (արժեթղթերի քանակը), միավոր արժեթղթի գնման/վաճառքի/կատարման գնային սահմանափակումները (եթե պատվերը շուկայական չէ):

1.2.1.29. **Ոչ բավարար ծածկույթով գործարքներ** - Հաճախորդի անունից նրա հանձնարարականի համաձայն Ընկերության կողմից կատարվող, փոխանցվող գործարքներ (կամ գործարքներ, որոնց կատարման հանձնարարականը Ընկերությունը ընդունում է Հաճախորդից և հաղորդում է երրորդ անձանց ի կատարում, այդ թվում՝ որևէ համակարգի միջոցով), որոնց վերաբերյալ հանձնարարականը ներկայացնելու պահին Հաճախորդի հաշվին առկա չեն դրանով նրա պարտավորությունները ամբողջությամբ կատարելու համար անհրաժեշտ միջոցներ, և այդ միջոցները պայմանականորեն կամ իրականում հասանելի են դարձվում Հաճախորդի համար Ընկերության կամ Գործակալների կողմից՝ դրանով իսկ հնարավոր դարձնելով համապատասխան գործարքի կնքումը:

1.2.1.30. **Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարք**՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք, որի առարկան Հաճախորդի կողմից Ֆինանսական գործիքի օտարումն է, և որի կնքման հանձնարարականը էլեկտրոնային առևտրային հարթակ մուտքագրելու պահին Հաճախորդի հաշվում առկա չեն այդ գործարքի կատարման և/կամ գործարքի վերջնահաշվարկ իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ համապատասխան արժեթղթեր և/կամ դրամական միջոցներ:

1.2.1.31. **Ոչ բավարար ծածկույթով առքի գործարք**՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք, որի առարկան Հաճախորդի կողմից Ֆինանսական գործիքի ձեռքբերումն է, և որի կնքման հանձնարարականը էլեկտրոնային առևտրային հարթակ մուտքագրելու պահին Հաճախորդի հաշվում առկա չեն այդ գործարքի կատարման/գործարքի վերջնահաշվարկ իրականացնելու համար անհրաժեշտ գումարի դրամական միջոցներ:

1.2.1.32. **Ծածկույթ**՝ էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության իրականացման համար Հաճախորդին տրամադրված անհրաժեշտ դրամական միջոցներ և/կամ արժեթղթեր:

1.2.1.33. **Շուկայական պատվեր** - Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող հանձնարարական, որը նախատեսում է գնման և/կամ վաճառքի

հանձնարարության անհապաղ կատարում այդ պահին շուկայում ձևավորված գնով հանձնարարականը ի կատար ածելու միջոցով:

1.2.1.34. **Շուկայական գին**՝ տվյալ գործարքի կնքման ԱՀ-ում այդ գործարքի առարկա Ֆինանսական գործիքի՝ տվյալ պահին գրանցված վերջին առքուվաճառքի գինը:

1.2.1.35. **Գնման/վաճառքի ստոպ պատվեր** - Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող Հանձնարարական, որը նախատեսում է հանձնարարականի կատարում (արժեթղթերի առք/վաճառք) շուկայում ձևավորված գնով (որպես շուկայական)՝ համապատասխան ԱՀ-ում տվյալ արժեթղթի գինը հանձնարարականում նշված գնին հասնելու դեպքում, ընդ որում փաստացի կատարման գինը մինչև փաստացի կնքման պահը տեղի ունեցած շուկայական տատանումների արդյունքում կարող է տարբերվել հանձնարարականում նշված գնից թե՛ հօգուտ Հաճախորդի և թե՛ ի վնաս նրա:

1.2.1.36. **Գնման/վաճառքի լիմիտային պատվեր** - Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող հանձնարարական, որը նախատեսում է հանձնարարականի կատարում՝ դրանում ֆիքսված գնից ոչ բարձր գնով՝ առքի դեպքում, և ոչ ցածր գնով՝ վաճառքի դեպքում, արժեթուղթ գնելու/վաճառելու պայմանով:

1.2.1.37. **Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր** - Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող հանձնարարական, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով, այն է՝ հանձնարարականը պարունակում է դրա կատարման հնարավորություն բացառապես համապատասխան ԱՀ-ում համապատասխան արժեթղթի գինը հանձնարարականում նշված արժեքին հասնելու դեպքում և միևնույն ժամանակ պարունակում է՝

(i) Հաճախորդի կողմից առքի դեպքում՝ գործարքի կատարման առավելագույն գնի սահմանում,

(ii) Հաճախորդի կողմից վաճառքի դեպքում՝ գործարքի կատարման նվազագույն գնի սահմանում:

1.2.1.38. **Դիրք կամ բաց դիրք** - գործարքներով Հաճախորդի պահանջների ու պարտավորությունների կշիռ՝ արտահայտված արժույթով կամ արժեթղթերով, որը հավասար չէ զրոյի:

1.2.1.39. **Դիրքի փակում**՝ Հաճախորդի կնքած գործարքների կնքման արդյունքում ստացված՝ Հաճախորդի Ֆինանսական գործիքի իրացում կամ վաճառված Ֆինանսական գործիքի ձեռքբերում Շուկայական գնով՝ Հակադարձ գործարքների կնքման միջոցով:

1.2.1.40. **Նախնական (անհրաժեշտ) մարժայի մեծություն**՝ Հաճախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքման համար անհրաժեշտ

գումար, որի առկայության դեպքում Էլեկտրոնային առևտրային հարթակը հնարավոր է դարձնում այդ գումարի կամ այդ գումարին Շուկայական գնով համապատասխանող քանակի արժեթղթերի և համապատասխանաբար Գործարքի արդյունքում փոխանցման ենթակա գումարի կամ գործարքով փոխանցման ենթակա արժեթղթերի ընդհանուր քանակի տարբերության ապահովումը և Գործարքի կնքումը:

1.2.1.41. **Սահմանային (նվազագույն) մարժայի մեծություն՝** Հաճախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքումից հետո պահպանման ենթակա նվազագույն գումար, որի առկայությունը չապահովելու դեպքում Էլեկտրոնային առևտրային հարթակը ավտոմատացված կերպով (առանց Հաճախորդին ծանուցելու) իրականացնում է Ոչ բավարար ծածկույթով գործարքի Հակադարձ գործարք Շուկայական գնով, որի արդյունքում ստացված Միջոցները ուղղվում են Ընկերության նկատմամբ Հաճախորդի դրամական և/կամ արժեթղթերով պարտավորությունները մարելուն:

1.2.1.42. **Հաղորդագրություն** - ցանկացած տեղեկատվության առաքում, փոխանակում, ծանուցում, հանձնարարականի ներկայացում, որ տեղի է ունենում Հաճախորդի և Ընկերության միջև կնքված Պայմանագրի շրջանակներում:

1.2.1.43. **Հաճախորդի հաշիվ** - Բրոքերային հաշիվը և Արժեթղթերի հաշիվը միասին՝ միավորված մեկ միասնական հաշվեհամարի ներքո:

1.2.1.44. **Միջոցներ** - դրամական միջոցներ և արժեթղթեր, որոնք Հաճախորդը տրամադրել է Ընկերությանը իր հանձնարարականների կատարման և վերջնահաշվարկի ապահովման նպատակով կամ որոնք առաջացել են (ստացվել են) Հաճախորդի հանձնարարականները կատարվելու արդյունքում:

1.2.1.45. **Կիրառվող իրավունք** կամ **Կիրառելի իրավունք** - այն երկրի օրենքները և համապարտադիր բնույթ կրող այլ իրավական ակտերը, որոնք տարածվում են ի կատարումն Պայմանագրի Ընկերության կողմից իրականացված գործողությունների նկատմամբ:

1.2.1.46. **Վերջնահաշվարկ** - գործարքի կատարման ժամկետի լրացման կապակցությամբ փոխադարձ պարտավորությունների կատարում դրանց կատարման ժամկետին, որը սահմանված է տվյալ գործարքի կնքման գործող պայմաններով:

1.2.1.47. **Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց** - ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:

1.2.1.48. **Սակագին** – Ընկերության կողմից յուրաքանչյուր ծառայության համար սահմանված սակագներ, որոնք ընդունվում են Գլխավոր տնօրենի կողմից և հրապարակվում և մշտապես հասանելի են Կայքում և Ընկերության գրասենյակում:

1.2.1.49. **Աշխատանքային օր (բանկային օր)՝** օրացուցային օր, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանգստյան և տոն օրերի, ինչպես նաև համապատասխան նորմատիվ ակտերով աշխատանքային օրեր տեղափոխված հանգստյան օրերի:

1.2.1.50. **Կենտրոնական Բանկ –** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

1.2.1.51. **Ֆիդուցիար պարտականություն –** Ընկերության պարտականությունը՝ մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն, ի շահ հաճախորդի

1.2.1.52. **Հուսալի միջոց –** Հաճախորդի կողմից Դիմում-Պայմանագրում նշված կապի և ծանուցումների միջոցներից ցանկացածը, ինչպես նաև Էլեկտրոնային առևտրային հարթակի հաղորդակցման գործիքը:

1.2.2. Պայմանների 1.2.1. կետով չսահմանված հասկացություններն ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված նորմատիվ ակտերում, ինչպես նաև կիրառելիության դեպքում՝ «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ հաստատված ակտերում սահմանված նշանակությունը:

1.2.3. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմաններով կամ չի բխում դրանց առանձին դրույթի իմաստից, ապա Պայմաններում.

1.2.3.1. եզակի թվով նշված բառերը նշանակում են նաև այդ բառի հոգնակի թիվը և հակառակը,

1.2.3.2. «ներառյալ», «այդ թվում՝», «ներառելով՝» բառերն օգտագործելիս ենթադրվում է, որ նրանց հաջորդում են «, բայց չսահմանափակելով» բառերը,

1.2.3.3. հղումը որևէ պայմանագրի, օրենքի, ենթաօրենսդրական ակտի, կանոնի նշանակում է հղում այդ պայմանագրին, օրենքին, ենթաօրենսդրական ակտին, կանոնին դրա փոփոխություններին և լրացումներին, որոնք կատարվել են մինչև Պայմանների ուժի մեջ մտնելը և դրանից հետո:

1.2.4. Պայմանների գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն կարող ազդել դրույթների մեկնաբանման վրա:

1.2.5. Պայմաններում հիշատակվող բոլոր պայմանագրերի ու այլ փաստաթղթերի ձևաթղթերը կամ օրինակելի ձևերը սույն Պայմաններով հաստատված չլինելու դեպքում հաստատվում են Ընկերության Տնօրինության որոշմամբ:

# Բաժին 2. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 2.1. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1.1. Ընկերությունը մատուցում է հետևյալ բրոքերային ծառայությունները՝ Պայմաններով նախատեսված պայմաններով և կարգով.

2.1.1.1. Հաճախորդի հաշվին արժեթղթերով կամ դրամական միջոցներով գործարքներ կատարելու վերաբերյալ Հաճախորդի հանձնարարականների ընդունում և անհրաժեշտության դեպքում դրա հաղորդում ի կատարումն այլ իրավասու անձանց;

2.1.1.2. Հաճախորդի հանձնարարականների հիման վրա և Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից արժեթղթերով կամ դրամական միջոցներով գործարքների կատարում, այդ թվում՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով իրավունքների իրականացմանն ուղղված գործարքներ;

2.1.1.3. Հաճախորդի հանձնարարականների հիման վրա արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքում վերջինիս հաշվին և վերջինիս անունից: Ընկերությունը գործարքներ կնքում է Հաճախորդի անունից այն դեպքերում, երբ նրա կարծիքով Հաճախորդի անունից գործարքի կնքումը վերջինիս համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ և թույլատրված է ԱՀ-ի կանոններով, ինչպես նաև ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելիս;

2.1.1.4. վերը նշված ծառայությունների համար անհրաժեշտ վերջնահաշվարկի (settlement) համար անհրաժեշտ գործողությունների իրականացում՝ Հաճախորդի հաշվից փոխանցելով և հաշվին մուտքագրելով գործարքների կատարման համար պահանջվող և դրանց արդյունքում ստացվող միջոցները՝ սույն Պայմաններին համապատասխան;

2.1.1.5. ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքում՝ Պայմաններով և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում;

2.1.1.6. վերջնահաշվարկի համար անհրաժեշտ արժույթի տրամադրում/փոխանակում;

2.1.1.7. վերջնահաշվարկի ապահովում;

2.1.1.8. ծառայությունների առնչությամբ պահառուական գործարքներ:

2.1.2. Պայմանագրի կնքմամբ Հաճախորդի համար բացվում է Բրոքերային հաշիվ: Հաճախորդի կողմից Դիմում-Պայմանագրի տրամադրումն Ընկերությանը համարվում է Բրոքերային հաշվի բացման հանձնարարական:

2.1.3. Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով Ընկերությանը՝ Հաճախորդը հավաստիացնում է, որ ծանոթացել է և ընդունում է Ռիսկերի հայտարարագիրը (Հավելված 1):

2.1.4. Պահպանելով Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները՝ Ընկերությունը Պայմանագրի համաձայն ծառայություններ մատուցելիս առանց Հաճախորդի համաձայնության կարող է օգտվել երրորդ անձանց ծառայություններից: Հաճախորդի հանձնարարականները կատարելու համար Ընկերությունն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից և ԱՀ-ներից, եթե Հաճախորդի հանձնարարականում նշված չէ այն կոնկրետ միջնորդը, որի հետ Ընկերությունը պայմանագրային հարաբերություններ է հաստատել:

2.1.5. Ընկերությունը Հաճախորդի հանձնարարականները կատարում է կամ հաղորդում է երրորդ անձանց ի կատարում միայն այն դեպքերում, երբ Հաճախորդի հաշվում առկա են այդ հանձնարարականների համաձայն կատարվող գործարքով վերջնահաշվարկ կատարելու և Ընկերության նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները մարելու համար բավարար դրամական միջոցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է կամ ի կատարում է հաղորդվում/փոխանցվում սույն Պայմանների համաձայն տրված Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքման հանձնարարական:

2.1.6. Հանձնարարականի ընդունումը, ընդունված հանձնարարականի կատարումը և/կամ ի կատարում հաղորդումը մերժվում է, եթե՝

2.1.6.1. այն չի ներկայացվել Պայմաններին համապատասխան ձևով և բովանդակությամբ, սխալ են լրացված հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ տվյալները,

2.1.6.2. այն չի ներկայացվել Պայմաններով սահմանված կարգով և բովանդակությամբ,

2.1.6.3. Ընկերության մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել հանձնարարականը ներկայացնող անձի՝ այն ներկայացնելու իրավասություն ունենալու վերաբերյալ՝ ինքնությունը պարզելու համար սույն կարգով սահմանված գործողությունները կատարելու արդյունքում,

2.1.6.4. եթե հանձնարարականով գործարքի վերջնահաշվարկի կատարման համար անհրաժեշտ արժույթի արժութային շուկաներում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը ՀՀ կենտրոնական բանկը չի հաշվարկում և հրապարակում,

2.1.6.5. Ընկերության գործակալները մերժում են համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության կողմից իրենց ի կատարման հաղորդված հանձնարարականի ընդունումը՝ հաշվի առնելով նրանց կողմից որոշակի շուկաներում և ԱՀ-ներում գործարքների կնքում/կատարումը ապահովելու հնարավորության բացակայությունը,

2.1.6.6. Ընկերության համար իրենից անկախ ցանկացած պատճառով օբյեկտիվորեն անհնարին է դարձել հանձնարարականի կատարումը կամ դրա հաղորդումը ի կատարում,

2.1.6.7. համապատասխան ԱՀ-ի կամ գործակալների կողմից սահմանվում կամ կիրառվում են հանձնարարականի կատարումը անհնարին դարձնող արգելքներ և սահմանափակումներ,

2.1.6.8. Ընկերության ներքին իրավական ակտերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

## 2.2. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԵՏԿԱՆՉՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.2.1. Գործարք կնքելու համար Հաճախորդը Ընկերությանն է ներկայացնում հանձնարարական, որը պետք է պարունակի գործարքի էական պայմանները:

2.2.2. ԱՀ-ներում իրականացվող գործարքների դեպքում հանձնարարականում կարող է նշվել նաև Պայմաններով սահմանված հանձնարարականի տեսակներից մեկը, ինչպես նաև հանձնարարականի վավերության ժամկետները (կատարման ենթակա լինելու ժամկետները)՝ արտահայտված օրերով կամ մինչև հետկանչում: Ընդ որում՝

2.2.2.1. հանձնարարականի տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Շուկայական պատվեր:

2.2.2.2. հանձնարարականի վավերության ժամկետ նշված չլինելու դեպքում այն վավեր է մինչև տվյալ ԱՀ-ում՝ գործարքի կատարման հանձնարարականը ներկայացնելիս կամ դրանից հետո սկսված առաջին Առևտրային նստաշրջանի ավարտը:

2.2.3. Հաճախորդի միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից սույն Պայմանների Հավելված 2-ով սահմանված ձևի Հանձնարարականը՝ տրամադրված առձեռն կամ Հուսալի միջոցներով, ինչպես նաև Գործարքի էական պայմանները պարունակող՝ էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով փոխանցված կամ հեռախոսով Ընկերությանը հաղորդված հանձնարարականները: Այն դեպքում, երբ Ընկերությունը կազմում է Հանձնարարական և Հուսալի միջոցներով տրամադրում Հաճախորդին, Հաճախորդի կողմից պատասխան հաստատումը ևս համարվում է Հանձնարարական: Հուսալի միջոցներով ուղարկված հանձնարարականները կամ հանձնարարականների հաստատումները համարվում են տրված՝ անկախ հանձնարարականի կամ հանձնարարականի հաստատման վրա ստորագրության առկայության, բացառությամբ 2.2.4.-րդ կետով սահմանված դեպքի:

2.2.4. Միջոցների ելքագրման Հանձնարարականը պետք է ստորագրված, իսկ կնիքի առկայության դեպքում՝ նաև կնքված լինի Հաճախորդի կողմից:

2.2.5. Էլեկտրոնային փոստով Հանձնարարական ներկայացնելը նախընտրելով՝ Հաճախորդը պետք է գիտակցի և գիտակցում է, որ Ընկերությունից անկախ տեխնիկական և այլ հանգամանքները հաշվի առնելով, բացառված չէ, որ ուղարկված Հանձնարարականը չի հասնի Ընկերությանը, նրան կհասնի ուշացումով, ուղարկված լինի համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած լինի այլ միջոցներով, այդ թվում ցանցային խափանումների, ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով: Սույնով Կողմերը համաձայնում են, որ Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, իսկ Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից ստացված Հանձնարարականը Ընկերությունը դիտարկում է որպես Հաճախորդից ստացված:

2.2.6. Հեռախոսով փոխանցվող Հանձնարարականները ձայնագրվում են Ընկերության կողմից և սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Ընկերության հետ իր հաղորդակցությունների փոխանակման ձայնագրությանը: Հեռախոսով Հանձնարարական ընդունելիս Ընկերության լիազորված աշխատակիցը իրավունք ունի իր հետ կապ հաստատած անձի ինքնությունը ճշտելու նպատակով վերջինիս ուղղել դրա համար անհրաժեշտ հարցեր, այդ թվում հարցնել Պայմանագրի վավերապայմանները և Հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ այլ հարցեր և Հանձնարարականը ընդունել միայն այն դեպքում, երբ ստացված պատասխանների հիման վրա Հաճախորդը նույնականացվում է:

2.2.7. Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված Հանձնարարականը կամ դրա գնային, քանակական, ժամկետային պայմաններում փոփոխություններ կատարել՝ Հանձնարարականի ներկայացման համար սույն գլխով սահմանված պայմանների պահպանմամբ համապատասխան հաղորդագրություն ուղարկելով: Հաղորդագրությունը ընդունվում է ի կատարում, եթե տվյալ փոփոխվող/հետկանչվող Հանձնարարականով Ընկերության կողմից դեռևս Գործարքի կնքման հայտը կամ օֆերտան չի բավարարվել կամ ակցեպտավորվել: Հանձնարարականի հետկանչման հաղորդումը համարվում է ընդունված հաղորդագրությունը Ընկերության ներկայացուցչին հասնելու պահից: Ընդ որում, եթե Հաճախորդի հետկանչման հաղորդումը ստանալու պահից մինչև Ընկերության կողմից համապատասխան Հանձնարարականով համապատասխան ԱՀ-ից գործարքի կնքման հայտը հետ կանչելը հաստատվելը ընկած ժամանակահատվածում Հանձնարարականով Գործարքը կնքվում է, Հանձնարարականը հետ կանչելու մասին հաղորդագրությունը Ընկերության կողմից չի կատարվում:

2.2.8. Հաճախորդի կողմից պատվերի որոշ պայմանների փոփոխությունը դիտարկվում է որպես գործող պատվերի կասեցում և նոր պատվերի ընդունում:

2.2.9. Ընկերությունը գործարքները կնքում է ֆոնդային բորսաներում, այլ կարգավորվող շուկաներում, ինչպես նաև չկարգավորվող շուկայում համաձայն իր կողմից հրապարակած Հաճախորդների պատվերների կատարման քաղաքականության:

2.2.10. Հաճախորդը կարող է ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու Հանձնարարական ներկայացնել և այդ նպատակով Ընկերությունից ստանալ դրամական կամ արժեթղթերի փոխառություն: Ոչ ստանդարտացված ածանցյալ գործիքների դեպքում կետը գործում է որպես պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդների համար:

2.2.11. Ընկերությունը իրավունք ունի մերժել ընդունված Հանձնարարականի կատարումը, եթե այն ընդունելուց հետո պարզվում է, որ Հաճախորդի հաշիվներում առկա չեն բավարար միջոցներ (բացառությամբ ոչ բավարար ծածկույթով գործարքների)՝ հանձնարարականը կատարելու և այդ հանձնարարականի կատարման դիմաց վճարները գանձելու համար, ընդ որում՝ Ընկերությանը սույնով իրավունք է վերապահվում անակցեպտ կարգով, առանց Հաճախորդի նախնական ծանուցման գանձել Հաճախորդի հաշիվներում առկա գումարները՝ համապատասխան գործարքը կատարելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ: Հանձնարարականը կարող է չկատարվել նաև այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվում առկա Հաճախորդի Միջոցները, որոնց նկատմամբ տրվել է Հանձնարարականը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են:

2.2.12. Հանձնարարականի կատարումը մերժելու դեպքում Ընկերությունը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով ՝ համապատասխան ծանուցում ուղարկելով:

2.2.13. Կախված շուկայի տեսակից (բորսայական, արտաբորսայական, կարգավորված կամ չկարգավորված) և վայրից, գործարքի բնույթից և կատարման ժամկետներից՝ Ընկերության կողմից կարող են գրավոր սահմանվել Հանձնարարականի ներկայացման և հետկանչման վերջնաժամկետներ, որոնց խախտմամբ ներկայացված Հանձնարարականը կամ հետկանչման հաղորդագրությունը չի կատարվում:

2.2.14. Գործարքներ կնքելու համար ԱՀ-ների կամ Ընկերության գործընկերների կողմից մեկ հանձնարարականով գնվող/վաճառվող արժեթղթերի նվազագույն քանակական/ծավալային սահմանափակումներ սահմանված լինելու դեպքում այդ սահմանափակումները տարածվում են նաև Հաճախորդի հանձնարարականների վրա, որի մասին Ընկերությունը տեղյակ է պահում Հաճախորդին:

2.2.15. Հաճախորդը ընդունում է, որ Հանձնարարականներով ձեռքբերման ենթակա արժեթղթերի շրջանակը, Գործարքների ծավալները, Գործարքներով Հանձնարարականների ներկայացման վերջնաժամկետները սահմանափակվում են նշված Գործարքների կատարումը ապահովող Գործակալների և ԱՀ-ների կողմից սահմանված արժեթղթերի ցանկով, ծավալային սահմանափակումներով

և/կամ սահմանաչափերով և Հանձնարարականների ներկայացման/կատարման ժամկետային սահմանափակումներով: Ամեն դեպքում Հանձնարարականները Ընկերությունը ընդունում է Գործառնական օրվա ընթացքում, ընդ որում՝ տվյալ ԱՀ-ում Առևտրային նստաշրջանի ավարտից հետո և մինչև մյուս Առևտրային նստաշրջանի սկսվելը ներկայացված Շուկայական պատվերը ենթակա չէ կատարման կամ ի կատարում հաղորդման:

2.2.16. Համաձայն «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» 4/07 կանոնակարգի յուրաքանչյուր պատվեր մինչև աշխատանքային օրվա ավարտը գրանցվում է Ընկերության էլեկտրոնային գրանցամատյանում կամ էլեկտրոնային առևտրային հարթակով գործարքների դեպքում՝ էլեկտրոնային առևտրային հարթակով նախատեսվող գրանցամատյանում:

## 2.3. ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.3.1. Ածանցյալներով բրոքերային ծառայությունները մատուցվում են՝ համապատասխան ածանցյալների առևտուր կազմակերպող ԱՀ-ների և Գործակալների կողմից սահմանված պայմանների համաձայն և դրանց կողմից սահմանված սահմանափակումները հաշվի առնելով:

2.3.2. Որոշակի ածանցյալ գործիքներով, մասնավորապես՝ օպցիոն գործարքներով Հաճախորդի բաց դիրքի առկայության դեպքում՝ տվյալ ԱՀ-ում օպցիոնի կատարման օրվա Առևտրային նստաշրջանին նախորդած Առևտրային նստաշրջանի բացման պահին (այսուհետ՝ Ապահովման պահ) Հաճախորդի հաշվում օպցիոնի կատարումից բխող պարտավորությունները բավարարելու համար անհրաժեշտ միջոցների անբավարարության դեպքում, Ընկերությանը սույնով իրավունք է վերապահվում՝ փակել օպցիոնով Հաճախորդի Բաց դիրքը՝ վաճառելով օպցիոնը: Միևնույն ժամանակ Ապահովման պահին միջոցների բավարարության դեպքում՝ Ապահովման պահից մինչև Ընկերության կողմից տվյալ օպցիոնով Բաց դիրքի փակումը կամ օպցիոնի փաստացի կատարումն ընկած ժամանակահատվածում Ընկերությունն իրավունք ունի չընդունել և ի կատարում չփոխանցել Հաճախորդի այն հանձնարարականները, որոնցով Գործարքների գինը գերազանցում է Հաճախորդի հաշվում առկա միջոցների ընդհանուր արժեքի և Գործարքի կատարման համար անհրաժեշտ միջոցների տարբերությունը:

## 2.4. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.4.1. Պայմանների համաձայն մատուցվող Բրոքերային ծառայությունների ընթացքում անհրաժեշտ պահառուական և վճարահաշվարկային գործողությունները, Հաճախորդի հաշիվներով գործառնությունները կարգավորվում են սույն

Պայմանների համաձայն պառահուական ծառայությունների պայմաններով և Ընկերության իրավական ակտերով:

2.4.2. Բրոքերային հաշվում առկա դրամական միջոցների (այն չափով, որով դրանք ծանրաբեռնված չեն ընդունված կամ կատարված հանձնարարականով, Ընկերության կամ երրորդ անձանց իրավունքներով) և Պայմանագրի համաձայն Ընկերությանը վճարման ենթակա գումարների տարբերությունը հանդիսանում է Հաճախորդի նկատմամբ Ընկերության անժամկետ պարտավորությունը:

2.4.3. Բրոքերային հաշվի մնացորդի դիմաց Ընկերությունը Հաճախորդին տոկոսներ չի վճարում:

2.4.4. Հաճախորդի Բրոքերային հաշվով հիմնական գործառնություններն են.

2.4.4.1. Բրոքերային հաշվից գումարների փոխանցում ՀՀ և արտասահմանյան բանկերում Հաճախորդի անունով բացված հաշիվներին,

2.4.4.2. դրամական միջոցների մուտքագրում ՀՀ և արտասահմանյան բանկերում Հաճախորդի անունով բացված հաշիվներից,

2.4.4.3. Պայմանների համաձայն Վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ գործառնություններ:

2.4.5. Բրոքերային հաշիվներով գործարքները կատարվում են Հաճախորդի համապատասխան հանձնարարականների հիման վրա: Ընդ որում՝ հանձնարարականը հանդիսանում է համապատասխան չափով Բրոքերային հաշվով գործարք կատարելու հանձնարարական: Պայմանների 2.4.3. կետում նշված դրամական փոխանցումները կատարվում են համապատասխան հանձնարարական ներկայացնելուց հետո՝ երկու Գործառնական օրվա ընթացքում:

2.4.6. Առանց Հաճախորդի հանձնարարականի Բրոքերային հաշվից գումարներ դուրս են գրվում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների հիման վրա, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Հաճախորդի հետ Ընկերության կնքած բոլոր պայմանագրերով սահմանված դեպքերում:

2.4.7. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ մերժել միջոցների մուտքագրումը Բրոքերային հաշիվ, եթե Ընկերության ներքին գնահատմամբ Բրոքերային հաշվում միջոցների առկայությունը, հաշվի առնելով Հաճախորդի կողմից այդ միջոցների օգտագործմամբ կնքվելիք (կնքման հնարավորություն ունեցող) գործարքների բնույթը և ռիսկայնությունը, կարող է հանգեցնել զգալի կորուստների Հաճախորդի և/կամ Ընկերության համար:

2.4.8. Բրոքերային հաշվով գործարք կատարելու լիազորություն ունեն նույն անձինք, որոնք իրավասու են ներկայացնել Հանձնարարականներ:

2.4.9. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Ընկերությունը Պայմանագրի շրջանակներում իրեն տրամադրված և ստացված միջոցները օգտագործի ի շահ իրեն (Ընկերության), այդ թվում գրավադրի դրանք՝ առանց խախտելու Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները: Այդուհանդերձ Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում

պահովել այդ միջոցների հասանելիությունը Հաճախորդին: Արժեթղթերի օգտագործման պարագայում Հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում Ընկերությունը պարտավորվում է հասանելի դարձնել նույնական արժեթղթեր: Սույն կետի իմաստով՝ նույնական են համարվում այն արժեթղթերը, որոնք նույնական են իրենց տեսակով, անվանական արժեքով, նկարագրությամբ և քանակով: Եթե նույնական արժեթղթերի մատակարարումը հնարավոր չէ, ապա Ընկերությունը հասանելի է դարձնում համարժեք արժեթղթեր: Համարժեք արժեթղթեր են համարվում այն արժեթղթերը, որոնք ունեն համարժեք տնտեսական արժեք և իրավունքներ:

2.4.10. Ընկերությունը Հաճախորդի Միջոցները կարող է պահել անվանատիրոջ և իր կամ իր անունով այլ ֆինանսական հաստատություններում (այդ թվում՝ արտասահմանյան) բացված բանկային և դրամական միջոցների հաշվառման այլ հաշիվներում՝ ՀՀ կամ գործարքի կնքման այլ պետության օրենսդրության և դրան համապատասխան կնքված պայմանագրերի համաձայն: Ընկերությանը սույնով իրավունք է վերապահվում գործարքներ կնքելիս միացնել Հաճախորդի միջոցները իր այլ Հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներին՝ ամեն դեպքում, սակայն պահպանելով իր և Հաճախորդի, ինչպես նաև իր տարբեր Հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառումը՝ ներքին հաշվառման (արտացոլման) համակարգի պատշաճ վարման միջոցով:

2.4.11. Ընկերության կողմից ծառայությունների մատուցման համար նախատեսված կամ դրանց արդյունքում ստացված Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են սույն Պայմաններին համապատասխան՝ Ընկերության պահառության ծառայության Պայմանների համաձայն բացված և սպասարկվող արժեթղթերի հաշիվներում:

2.4.12. Սույն բաժնով Պայմանների համաձայն գործարք կատարելու տրված Հանձնարարականը հանդիսանում է նաև Հաճախորդի արժեթղթերի հաշիվներով համապատասխան պահառուական գործարք կատարելու հանձնարարական, մասնավորապես՝

2.4.12.1. արժեթղթերի ընդունում/մուտքագրում հաշվին,

2.4.12.2. արժեթղթերի փոխանցում/ելքագրում հաշվից,

2.4.12.3. արժեթղթերի արգելադրում/գրավադրում հօգուտ երրորդ անձանց և/կամ Ընկերության:

2.4.13. Հաճախորդը կարող է նաև Ընկերությանը ներկայացնել իր արժեթղթերի հաշվով որոշակի գործարքներ (մուտքագրում, ելքագրում, փոխանցում և այլն) կատարելու հանձնարարական՝ անկախ Բրոքերային ծառայություններով հանձնարարական ներկայացնելուց՝ Պահառության ծառայության շրջանակներում:

2.4.14. Պայմանների իմաստով վերջնահաշվարկ է հանդիսանում Ընկերության կողմից տվյալ հանձնարարականով կատարված գործարքի արդյունքում Հաճախորդի պարտավորությունների կատարումը և գործարքի մյուս կողմից կատարման ընդունումը, մասնավորապես՝

2.4.14.1. արժեթղթերի ընդունում, հաշվառում և փոխանցում,

2.4.14.2. դրամական միջոցների փոխանցում, ընդունում և հաշվառում, Աճանցյալներով տատանվող հաշվեկշռի լրացում,

2.4.14.3. սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործողությունները կատարելու համար արժութային փոխարկումներ:

2.4.15. Ընկերությունը Հաճախորդի վերջնահաշվարկը իրականացնում է առանց Հաճախորդից լրացուցիչ հանձնարարականներ ստանալու: Կողմերը Պայմանագրով համաձայնում են, որ Հանձնարարականը ինքնաբերաբար հանդիսանում է նաև Հաճախորդի միջոցներով վերջնահաշվարկ կատարելու հանձնարարական:

2.4.16. Հաճախորդը պարտավոր է ապահովել Ընկերությանը վերջնահաշվարկի համար անհրաժեշտ միջոցներով՝ Պայմանների համաձայն Հաճախորդի հաշվում համապատասխան Միջոցների առկայությունը ապահովելով:

## 2.5. ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ

2.5.1. Ընկերությունը Բրոքերային ծառայությունների մասով Պայմանագիր կնքող Հաճախորդների համար տրամադրում է բրոքերային դրամական և արժեթղթերի հաշիվների կարգավիճակի, մնացորդի՝ էլեկտրոնային եղանակով մշտադիտման և էլեկտրոնային հաշվետվությունների ստացման հնարավորություն Ընկերության դիտարկման հարթակի միջոցով:

2.5.2. Հաճախորդի կողմից դիտարկման հարթակի մուտքն ապահովվում է մուտքանվան, գաղտնաբառի և SMS հաղորդագրությամբ ուղարկվող կոդի միջոցով:

2.5.3. Դիտարկման հարթակի օգտագործման համար Հաճախորդի մուտքանունը Պայմանագիրը կնքելուց հետո տրամադրվում է Հաճախորդին:

2.5.4. Դիտարկման հարթակի նախնական մուտքի համար էլեկտրոնային հղում է ուղարկվում Հաճախորդի տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Սեղմելով հղման վրա՝ Հաճախորդն ինքնուրույն սահմանում է մշտական գաղտնաբառ՝ Դիտարկման հարթակ հետագա մուտքերի համար:

2.5.5. Դիտարկման հարթակի մուտքն համարվում է Հաճախորդի պատշաճ նույնականացում և դրան հաջորդող գործողությունները համարվում են Հաճախորդի կողմից պատշաճ կարգով լիազորված՝ անկախ մուտքը փաստացի իրականացրած անձի ինքնությունից, եթե մինչև այդպիսի մուտքը Հաճախորդը նախապես գրավոր չի տեղեկացրել Ընկերությանը Պայմանագրում նշված կապի միջոցներով և Գործառնական օրվա ընթացքում, որ իրեն տրամադրված մուտքի համար անհրաժեշտ տեղեկատվությունը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել այլ անձանց՝ առանց Հաճախորդի թույլատվության, և չի պահանջել իրեն տրամադրել նոր ծածկագիր:

2.5.6. Հաճախորդը ստանձնում է Դիտարկման հարթակի՝ իր կողմից պատշաճ օգտագործման հետ կապված ռիսկերը:

## 2.6. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

2.6.1. Հաճախորդին տրամադրվում են բրոքերային ծառայություններ նաև էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, մասնավորապես՝ Հաճախորդին տրամադրելով հասանելիություն էլեկտրոնային առևտրային հարթակին՝ Ընկերությունը հաճախորդին հնարավորություն է տալիս տեղական և արտասահմանյան ԱՀ-(ներ)ում արժեթղթերի և արտարժույթի առքուվաճառքի, ինչպես նաև ածանցյալ գործիքներով գործարքներ կնքել:

2.6.2. Ընկերությունը էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով Հաճախորդին ընձեռում է տեղեկատվություն ստանալու հնարավորություն՝ ԱՀ-ներում գնանշումների, ինչպես նաև գործարքի իրականացման հետ կապված այլ մանրամասների վերաբերյալ:

2.6.3. Էլեկտրոնային առևտրային հարթակը Հաճախորդին հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար ձևակերպել և էլեկտրոնային առևտրային հարթակի միջնորդությամբ համապատասխան ԱՀ-ներում կատարման առաքել Ֆինանսական գործիքի առուվաճառքի հանձնարարականներ, ընդ որում՝ Ընկերությունը էլեկտրոնային առևտրային հարթակին Հաճախորդի հասանելիությունն ապահովելու փաստի ուժով հանդիսանում է Հաճախորդի հանձնարարականներն ի կատարումն փոխանցման պատասխանատու (բայց ոչ դրանք կատարող ներդրումային ծառայություն մատուցող անձ):

2.6.4. Էլեկտրոնային առևտրային հարթակը հնարավորություն է ընձեռում Հաճախորդին Ֆինանսական գործիքի առուվաճառքի հանձնարարականներ ներկայացնել՝ որոշակի երկրների և/կամ տարածաշրջանների որոշակի ԱՀ-ներում գործարք կնքելու համար: Երկրները/տարածաշրջանները և ԱՀ-ները թվարկված են բրոքերային Սակագներում:

2.6.5. Էլեկտրոնային առևտրային հարթակը տրամադրվում է Հաճախորդին՝ բացառապես ի շահ իրեն օրինական Միջոցների օգտագործմամբ Ֆինանսական գործիքներով առևտուր իրականացնելու համար:

2.6.6. Էլեկտրոնային առևտրային հարթակը շահագործվում է բացառապես Հաճախորդի հայեցողությամբ և պատասխանատվությամբ: Էլեկտրոնային առևտրային հարթակը Հաճախորդի կողմից օգտագործվում է ամբողջությամբ և բացառապես Հաճախորդի ռիսկով ու պատասխանատվությամբ:

2.6.7. Ծառայության հասանելիություն ապահովելու նպատակով Ընկերությունը Հաճախորդին էլեկտրոնային փոստով՝ Պայմանագրում նշված Հաճախորդի էլեկտրոնային հասցեին ուղարկելով, տրամադրում է համապատասխան ծածկագիր՝ էլեկտրոնային առևտրային հարթակ մուտք գործելու և այն շահագործելու համար: Ընդ որում էլեկտրոնային փոստով ծածկագրի առաքումը համարվում է ծածկագրի պատշաճ հանձնում Հաճախորդին, և Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ծածկագիրը երրորդ անձանց հայտնի դառնալու

հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ ծածկագրի հայտնի դառնալը երրորդ անձանց Ընկերության դիտավորության անմիջական արդյունք է:

2.6.8. Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով իրականացվող Գործարքներով պարտավորությունների կատարման համար նախատեսված, ինչպես նաև այդ Գործարքների արդյունքում ստացվող դրամական միջոցների հաշվառման նպատակով օգտագործվում է Հաճախորդի համար բացված համապատասխան արժույթով բրոքերային հաշիվը/ենթահաշիվը, եթե Գործարքի արդյունքում Հաճախորդի նկատմամբ դրամական պարտավորությունը կատարվում է այնպիսի արժույթով, որով հաշիվները սպասարկվում են Ընկերության կողմից:

2.6.9. Եթե էլեկտրոնային առևտրային հարթակում ձևավորված արժույթով պարտավորության դիմաց Հաճախորդի տվյալ արժույթով հաշվին առկա միջոցներն անբավարար են, Ընկերությունը կարող է մարել այդ պարտավորությունը Հաճախորդի այլ արժույթով հաշվից:

2.6.10. Հաճախորդը կարող է իրականացնել գործարքներ միայն այն դեպքում, երբ գործարքի արժույթին համապատասխան հաշվին առկա են բավարար միջոցներ՝ գործարքը կատարելու համար:

2.6.11. Հաճախորդը կարող է փոխանցել միջոցներ իր տարբեր արժութային հաշիվների միջև:

2.6.12. Հաճախորդը Դիմում-Պայմանագիրը ներկայացնելու փաստով տալիս է Ընկերությանն իր հանձնարարականը՝ 2.6.8. կետում նշված հաշիվները բացելու համար:

2.6.13. Եթե համապատասխան արժույթով հաշիվներ Ընկերության կողմից չեն սպասարկվում, ապա Գործարքի արդյունքում ստացված Միջոցների հաշվառման նպատակով իրականացվում են արժութային համարժեքների հաշվարկները՝ հիմք ընդունելով ԱՄՆ դոլարի և համապատասխան Գործարքի արժույթի այն փոխարժեքները, որոնք կիրառվում են տվյալ Գործարքի կնքմանը մասնակցող Գործակալների կողմից:

2.6.14. Էլեկտրոնային առևտրային հարթակ մուտք գործելու համար տրամադրված ծածկագրով ցանկացած մուտք Էլեկտրոնային առևտրային հարթակ և Էլեկտրոնային առևտրային հարթակով իրականացված ցանկացած գործողություն, անկախ մուտքը փաստացի իրականացրած անձի ինքնությունից, համարվում է Հաճախորդի մուտքը Էլեկտրոնային առևտրային հարթակ և Հաճախորդի կողմից իրականացրած գործողություն/կնքված գործարք, եթե մինչև այդպիսի մուտքը Հաճախորդը նախապես գրավոր չի տեղեկացրել Ընկերությանը Պայմանագրում նշված կապի միջոցներով և գործառնական օրվա ընթացքում, որ իրեն տրամադրված ծածկագիրը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել այլ անձանց՝ առանց Հաճախորդի թույլատվության, և չի պահանջել իրեն տրամադրել նոր ծածկագիր:

2.6.15. Նոր ծածկագիր պահանջելու դեպքում այն ծածկագրի տրամադրման նույն կարգով փոխանցվում է Հաճախորդին ստացման մասին ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ պահանջը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, եթե պահանջը ներկայացնելուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը չի ստանում նոր ծածկագիր չստանալու մասին գրավոր բողոք, նոր ծածկագիրը համարվում է տրամադրված:

2.6.16. Ընկերությունն իրավունք ունի ժամանակավորապես կամ անորոշ ժամկետով արգելափակել Հաճախորդի հասանելիությունը էլեկտրոնային առևտրային հարթակին՝ այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետներում էլեկտրոնային նամակով ծանուցելով Հաճախորդին, եթե՝ հիմնավոր կասկածներ ունի, որ էլեկտրոնային առևտրային հարթակը շահագործվում է այն շահագործելու իրավասություն չունեցող անձի կողմից, հիմնավոր կասկածներ ունի, որ էլեկտրոնային առևտրային հարթակով իրականացվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման միտված գործողություններ, անհրաժեշտություն է առաջացել իրականացնել էլեկտրոնային առևտրային հարթակ տեխնիկական սպասարկումը՝ այն բարելավելու կամ անսարքությունները վերացնելու նպատակով:

2.6.17. Էլեկտրոնային առևտրային հարթակին Հաճախորդի հասանելիությունը արգելափակվում է նաև ծառայության մասով կամ ամբողջությամբ Պայմանագիրը լուծվելու դեպքում՝ լուծման օրվանից 3 օր առաջ, եթե Կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվում, ինչպես նաև Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա:

2.6.18. Ընկերության կողմից Կայքում էլեկտրոնային առևտրային հարթակի օգտագործման/շահագործման ձեռնարկները, ուղեցույցերը, ուսուցողական կամ նմանատիպ այլ նյութերն ունեն բացառապես տեղեկատվական բնույթ և որևէ պարտավորությամբ չեն ծանրաբեռնում Ընկերությանը, հետևաբար Հաճախորդը չի կարող որևէ պահանջ ներկայացնել Ընկերությանը սույն կետում նշված նյութերի հիման վրա գործողություններ ձեռնարկելու կամ չձեռնարկելու հետևանքների կապակցությամբ:

2.6.19. Էլեկտրոնային առևտրային հարթակը հնարավորություն է տալիս Հաճախորդին կնքել Ոչ բավարար ծածկույթով գործարքներ նախապայմաններն ապահովելու և դրանց համապատասխանելու դեպքում:

2.6.20. Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման նախապայմաններն են՝ դրանց կնքման կարգն ու պայմանները, Նախնական մարժայի մեծությունը, Սահմանային մարժայի մեծությունը, տոկոսադրույքը և դրա հաշվարկման և վճարման կարգը, Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքների առարկա Ֆինանսական գործիքների սահմանափակ շրջանակը:

2.6.21. Ընկերությունը Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով կարող է ապահովել Ոչ բավարար ծածկույթով առքի և վաճառքի գործարքների կնքման

հնարավորությունը Հաճախորդի համար, եթե Հաճախորդն ապահովում է Նախնական մարժայի մեծության առկայությունը Հաճախորդի հաշվում:

2.6.22. Նախնական մարժայի մեծությունը արտահայտվում է որպես Ոչ բավարար ծածկույթով գործարքի գին/մեծություն, որը հասանելի և տեսանելի է Էլեկտրոնային առևտրային հարթակում յուրաքանչյուր Ոչ բավարար ծածկույթով գործարքի վավերապայմաններում:

2.6.23. Սահմանային մարժայի մեծությունը սահմանվում է Ընկերության կողմից որպես Ոչ բավարար ծածկույթով գործարքի գնի տոկոս:

2.6.24. Սահմանային մարժայի մեծությունը Հաճախորդի հաշվում չապահովելու դեպքում Էլեկտրոնային առևտրային հարթակի կողմից իրականացվում է Ոչ բավարար ծածկույթով գործարքներով Դիրք(եր)ի փակում: Ընդ որում՝ եթե Էլեկտրոնային առևտրային հարթակում առկա են մեկից ավել Ոչ բավարար ծածկույթով գործարքներով բաց Դիրքեր, ապա Դիրքերի փակման հերթականությունն ընտրվում է ըստ դրանցից ամենախոշոր վնասով Ոչ բավարար ծածկույթով գործարքներով Դիրքի: Դիրքերի փակում կարող է իրականացվել նաև ապացուցակման դեպքում:

2.6.25. Նախնական և Սահմանային մարժայի մեծությունները կարող են փոխվել՝ առանց Հաճախորդին այդ մասին նախապես ծանուցելու, և Հաճախորդը սույնով հավաստում է, որ ինքը գիտակցում է դրանց՝ ժամանակի ցանկացած պահի հետևելու անհրաժեշտությունը, և որ ինքը չի կարող բողոք ներկայացնել, եթե նշված մեծությունների փոփոխման արդյունքում տեղի ունենա Դիրքերի փակում:

2.6.26. Ընկերությունը չի ստանձնում Սահմանային մարժայի մեծությունը չբավարարելու վերաբերյալ Հաճախորդին ծանուցելու պարտականություն, և Էլեկտրոնային առևտրային հարթակն առանց ծանուցման կարող է իրականացնել համապատասխան Դիրքերի փակում՝ ստացված Միջոցները ուղղելով Սահմանային մարժայի մեծության բավարարմանը, ինչպես նաև Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունների մարմանը:

2.6.27. Սահմանային մարժայի մեծությունը հանդիսանում է Հաճախորդի դրամական կամ արժեթղթերով պարտավորությունը՝ արտահայտված դրամական համարժեքով:

2.6.28. Մինչև Հաճախորդի կողմից Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունների լրիվ և ամբողջական մարումը Ոչ բավարար ծածկույթով գործարքի հետևանքով ստացված դրամական միջոցները և արժեթղթերը կամ վերջիններիս իրացման արդյունքում ստացված դրամական միջոցները, որպես Հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց, կարող են պահվել Ընկերության կողմից (Միջոցների պահում)՝ Հաճախորդի դրամական և արժեթղթերով բոլոր պարտավորությունների ընդհանուր գումարի սահմաններում: Միջոցների պահումը ենթադրում է, որ Ընկերությունը իրավունք ունի սառեցնել համապատասխան գումարի միջոցներ Հաճախորդի հաշվին և չկատարել դրանց փոխանցման հանձնարարականները:

2.6.29. Հաճախորդի պարտավորությունը Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած՝ Ընկերության նկատմամբ Հաճախորդի պարտավորությունն է, ընդ որում՝ Հաճախորդի դրամական պարտավորությունը Ոչ բավարար ծածկույթով առքի գործարքի արդյունքում ծագած, իսկ արժեթղթերով պարտավորությունը՝ Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքի արդյունքում ծագած պարտավորությունն է:

2.6.30. Եթե Հաճախորդը չի օգտվում Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու հնարավորությունից, ապա Օրական առևտրում միավոր արժեթղթի վերջնահաշվարկն իրականացվում է առնվազն երկու օր հետո:

## Բաժին 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1.1. Ընկերությունը Հաճախորդին մատուցում է նաև արժեթղթերի պահառության ծառայություն:

3.1.2. Ընկերության կողմից մատուցվող պահառուական ծառայություններն են.

3.1.2.1. արժեթղթերի հաշիվներ բացելը և վարելը՝ այդ հաշիվներով գործառնությունների ժամկետներն ու էական պայմանները գրանցելով.

3.1.2.2. արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված ծառայություններ.

3.1.2.3. Հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալու ծառայություններ.

3.1.2.4. Հաճախորդի Հաշվին հաշվեգրված արժեթղթերի հետ կապված թողարկողների կորպորատիվ գործողությունների արտացոլում.

3.1.2.5. արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կամ այլ պահառուի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուներին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցումը.

3.1.2.6. Հաճախորդի Հաշվից քաղվածքների եւ գործառնությունների մասին տեղեկանքների (հաշվետվությունների) տրամադրում.

3.1.2.7. արժեթղթերի նկատմամբ կամ դրանցից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայություններ, որոնց բովանդակությունը, մատուցման կարգը և փոխհատուցման չափը սահմանված են Սակագներով.

3.1.3. Ընկերությունը պահառության ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում և դրանից դուրս շրջանառվող ազատ շրջանառության իրավունքով ոչ փաստաթղթային արժեթղթերի համար:

3.1.4. Ընկերությունը Հաճախորդին պահառության ծառայություններ է մատուցում ՀՀ օրենսդրության և Պայմանագրի (ներառյալ՝ Պայմանների) պահանջներին համապատասխան:

3.1.5. Հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանված կարգով արժեթղթերի պահառության ծառայության նկատմամբ տարածվում են սույն բաժնի դրույթները՝ Հավատարմագրային կառավարման պայմանագրի դրույթները հաշվի առնելով:

3.1.6. Պահառության ծառայությունների դիմաց վճարների ուշացման դեպքում Ընկերությունն իրավունք ունի վճարման համար նախատեսված օրվանից տասը օր հետո համապատասխան սակագները գանձել՝ վաճառելով Հաճախորդին պատկանող անհրաժեշտ քանակի կամ ծավալի շրջանառելի արժեթղթերը: Հաճախորդի կողմից Պահառության ծառայությունների դիմաց ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերը արգելադրվում են և արժեթղթերի հաշվով բոլոր գործառնությունները դադարեցվում են մինչև պարտավորությունների կատարումը:

3.1.7. Հաճախորդի արժեթղթերի հաշվում պահառության հանձնված արժեթղթերի վերաբերյալ Ընկերության կողմից կատարված գրառումները հավաստում են արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի սեփականության իրավունքը, եթե ՀՀ դատական մարմինների որոշումներով այլ բան սահմանված չէ: Պահառության հանձնված արժեթղթերի նկատմամբ իրավունքը չի հավաստվում օտարերկրյա արժեթղթերի Անվանատիրոջ հաշվին կատարված գրառումներով:

3.1.8. Պահառության ծառայության պայմանագրի կնքումը Հաճախորդին չի պարտավորեցնում անմիջապես պահառության հանձնել արժեթղթեր:

## 3.2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԻ ՀԱՇՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.2.1. Պահառության ծառայության մատուցման համար Ընկերությունում բացված Հաճախորդի արժեթղթերի հաշիվը պասիվային անալիտիկ հաշիվ է և բացվում է յուրաքանչյուր Հաճախորդի համար առանձին:

3.2.2. Հաճախորդի արժեթղթերի հաշիվը կարող է ունենալ հետևյալ տեսակները.

3.2.2.1. Բրոքերային ծառայությունների համար օգտագործվող արժեթղթերի հաշիվ – այս հաշիվը բացվում և վարվում է Հաճախորդի հաշվի ներքո՝ Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի հաշվառման նպատակով:

3.2.2.2. Հավատարմագրային կառավարման արժեթղթերի հաշիվ – այս հաշիվը բացվում է հավատարմագրային կառավարման հանձնված արժեթղթերի հաշվառման նպատակով:

3.2.3. Պայմանագրի կնքմամբ Հաճախորդի համար բացվում է Բրոքերային ծառայությունների համար օգտագործվող արժեթղթերի հաշիվ: Հաճախորդի կողմից Դիմում-Պայմանագրի տրամադրումն Ընկերությանը համարվում է Բրոքերային ծառայությունների համար օգտագործվող արժեթղթերի հաշվի բացման հանձնարարական:

3.2.4. Հավատարմագրային կառավարման արժեթղթերի հաշիվը բացվում է բացառապես Հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման պարագայում:

3.2.5. Արժեթղթերի հաշվառումը կատարվում է հատերով և մեկ արժեթուղթը համարվում է հաշվարկի նվազագույն միավոր: Արժեթղթերի քանակը հատերով արտահայտված չլինելու դեպքում նվազագույն միավոր է հանդիսանում արժեթղթի անվանական արժեքը:

3.2.6. Ընկերությունը պարտավոր է արժեթղթերի հաշվում գրառումներ կատարել միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի առկայության դեպքում:

3.2.7. Հաշիվը չի հանդիսանում դրանում հաշվառվող արժեթղթերի առաջնային պահպանման վայր, և Ընկերությունը կարող է չվարել դրա սեփականատերերի ռեեստրը: Ընկերությունը հանդես է գալիս հաշվում հաշվառվող արժեթղթերի անվանատեր այդ արժեթղթերի այլ պահառուների միջև՝ նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Անվանատիրոջ հաշիվներում Հաճախորդին պատկանող արժեթղթերը միացվում են Ընկերության մյուս Հաճախորդների արժեթղթերին և չեն նույնականացվում որպես Հաճախորդինը: Հաճախորդի արժեթղթերի նույնականացումը իրականացվում է բացառապես Ընկերության մոտ բացված և սպասարկվող արժեթղթերի հաշիվներում: Արտասահմանյան արժեթղթերի պարագայում Ընկերության անվանատիրոջ հաշիվները սպասարկող պահառուները նույնպես կարող են հանդես գալ որպես նույն արժեթղթերի անվանատեր այլ պահառուների առջև՝ վերջիններիս մոտ ունենալով արժեթղթերի անվանատիրոջ հաշիվներ: Այդպիսով, արտասահմանյան արժեթղթերի պարագայում արժեթղթերի պահառությունը իրականացվում է գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի միջոցով, որի յուրաքանչյուր մակարդակում որպես պահառու հանդես եկող անձի մոտ բացված հաշիվներում արժեթղթերը նույնականացվում են բացառապես այդ պահառուի անմիջական հաճախորդ հանդիսացող անձի (պահառուի, իսկ Ընկերության դեպքում՝ Հաճախորդի) անունով:

3.2.8. Ընկերությունը տեղեկությունների և փաստաթղթերի հետ կապված ծառայության մատուցումը կազմակերպում է վերոնշյալ բազմամակարդակ համակարգի

միջոցով: Թողարկողից Հաճախորդին ուղղված տեղեկությունները և փաստաթղթերը Հաճախորդին փոխանցվում են դրանք ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Հաճախորդից թողարկողին ուղղված տեղեկությունները և փաստաթղթերը Ընկերության կողմից փոխանցվում են համապատասխան կազմակերպչական, տեխնիկական, ինստիտուցիոնալ և իրավական հնարավորությունների առկայության դեպքում՝ վերոնշյալ բազմամակարդակ համակարգի միջոցով:

3.2.9. Ընկերությունն այլ պահառուների մոտ հանդես է գալիս որպես Հաճախորդի արժեթղթերի անվանատեր՝ ապահովելու համար ծառայությունների պատշաճ մատուցման հնարավորությունը:

## 3.3. ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

3.3.1. Հաճախորդի անունով բացված արժեթղթերի հաշվառման հաշվում համապատասխան գրանցումները կատարվում են մեկ Գործառնական օրվա ընթացքում, իսկ գրանցումներ կատարելու համար հիմք է հանդիսանում.

3.3.1.1. Արժեթղթերի փաթեթի կառավարման դեպքում՝ կատարված գործարքների վերաբերյալ գործընկեր կազմակերպությունից ստացված հաշվետվությունը/քաղվածքը:

3.3.1.2. Բրոքերային ծառայության դեպքում՝ կատարված գործարքները հավաստող փաստաթղթերը:

3.3.1.3. Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականի դեպքում՝ գործընկեր կազմակերպությունից ստացված հաշվետվությունը/քաղվածքը, իսկ երբ գործընկեր կազմակերպություն առկա չէ՝ Հաճախորդի հանձնարարականը:

3.3.2. Հաշվում հաշվառվող արժեթղթերով գործառնությունների կատարման հիմք կարող են հանդիսանալ ՀՀ կենտրոնական բանկում կամ այլ պահառուների մոտ բացված՝ Ընկերության անվանատիրոջ հաշիվներին հօգուտ Հաճախորդի մուտքագրված կամ ելքագրված արժեթղթերի վերաբերյալ Պահառուի ստացած ծանուցումները:

3.3.3. Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականը ընդունվում է Պատասխանատու աշխատակցի կողմից Գործառնական օրվա ընթացքում: Գործառնական օրվա ավարտից հետո ընդունված հանձնարարականը համարվում է ընդունված հաջորդ Գործառնական օրվա ընթացքում: Օտարերկրյա արժեթղթերի գործարքների իրականացման նպատակով տրվող հանձնարարականների ընդունման ժամկետները համապատասխանեցվում են օտարերկրյա պահառուների հետ կնքված պայմանագրերով նախատեսված ժամկետներին:

3.3.4. Եթե հանձնարարականը չի բավարարում սահմանված պահանջներին, ապա Ընկերությունը մերժում է հանձնարարականի ընդունումը: Հանձնարարականի

ընդունման մերժումը կատարվում է գրավոր ձևով՝ նշելով պատճառները: Հանձնարարականի ընդունման մերժումը Հաճախորդին է տրամադրվում հանձնարարականի տրամադրման օրվան հաջորդող Գործառնական օրվա ընթացքում:

3.3.5. Ընդունված բոլոր հանձնարարականները ենթակա են գրանցման հանձնարարականների մատյանում՝ ըստ ստացման հաջորդականության:

3.3.6. Հանձնարարականը պետք է ներառի դրա իրականացման համար անհրաժեշտ բոլոր վավերապայմանները և բավարարի հանձնարարականի ձևին ներկայացված պահանջներին:

3.3.7. Հանձնարարականը ենթակա է կատարման դրանում նշված օրվա ընթացքում կամ դրա և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման օրվա ընթացքում՝ գործարքի կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, սակայն ոչ ուշ, քան հանձնարարականի տրմանը հաջորդող 10-րդ օրացույցային օրը: Վերջինիս չբավարարման դեպքում հանձնարարականը հանվում է:

3.3.8. Ընկերության կողմից գրավոր ձևով մերժված հանձնարարականը համարվում է անվավեր և չի կարող հանդիսանալ պահառուական գործարքի կատարման հիմք:

3.3.9. Ընկերությունը մերժում է պահառուական գործարքի կատարումը, եթե.

- 3.3.9.1. Հանձնարարականը չի բավարարում նրա ձևին ներկայացվող պահանջներին,
- 3.3.9.2. Հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ՝ կապված օրինական լինելու հետ,
- 3.3.9.3. Հանձնարարականը պահանջում է այնպիսի գործարքի կատարում, որի իրականացումը սահմանված չէ սույն Պայմաններով,
- 3.3.9.4. Հանձնարարականի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտմանը,
- 3.3.9.5. Արժեթղթերի քանակը և կարգավիճակը (արժեթղթերի ծանրաբեռնումը երրորդ անձանց իրավունքներով, գրավադրում և այլն) թույլ չի տալիս կատարել նշված գործարքը,
- 3.3.9.6. Հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել արժեթղթերը,
- 3.3.9.7. Հանձնարարականի հետ ներկայացված չեն անհրաժեշտ փաստաթղթերը,
- 3.3.9.8. Հանձնարարականի տրման պահից տասը օրացուցային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որի դեպքում հնարավոր կդառնար կատարել հանձնարարականը,
- 3.3.9.9. Բացակայում է հակադարձ հանձնարարականը կամ տվյալները միմյանց չեն համապատասխանում առաքում վճարման դիմաց սկզբունքով ներպահառուական գործարքի կատարման համար,
- 3.3.9.10. Հաճախորդի՝ Պահառուի մոտ բացված և վարվող հաշիվներում առկա չեն գործառնության իրականացման համար անհրաժեշտ միջոցներ

3.3.9.11. այլ հիմքերի առկայության դեպքում:

## Բաժին 4. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

4.1.1. Ընկերությունը և Հաճախորդը պարտավոր են խստորեն գաղտնի պահել և ոչ մի պարագայում, առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության, Կողմ չհանդիսացող որևէ անձի կամ կազմակերպության չբացահայտել իրենց միջև կնքվող Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված որևէ գաղտնի տեղեկատվություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմաններով սահմանված դեպքերի:

4.1.2. Ընկերությունը պարտավոր է ապահովել Հաճախորդի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը: Ծառայողական տեղեկատվությունը հրապարակվում և տրամադրվում է բացառապես օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4.1.3. Գաղտնի տեղեկատվություն են համարվում հետևյալ տեղեկությունները՝

4.1.3.1. Հաճախորդի մասին տեղեկությունները,

4.1.3.2. Հաճախորդի արժեթղթերի հաշվի վիճակի վերաբերյալ տեղեկությունները,

4.1.3.3. Հաճախորդի արժեթղթերի հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկություն,

4.1.3.4. արտարժույթի առք և վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը,

4.1.3.5. այլ տեղեկությունները, որոնց գաղտնիության վերաբերյալ առկա է Հաճախորդի գրավոր դիմումը:

4.1.4. Ընկերության մոտ վարվող արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն Հաճախորդին (նրանց օրինական ժառանգներին), ինչպես նաև թողարկողին և նրա լիազորած ներկայացուցչին, օտարերկրյա պահառուին, որի մոտ բացված է Ընկերության օտարերկրյա արժեթղթերի անվանատիրոջ հաշիվը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց՝ Հաճախորդին պատկանող արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար: Սույն Պայմաններին միանալով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը և թույլտվությունը նշված բացահայտմանը այն ծավալով, որքանով որ դա անհրաժեշտ է իր հանդեպ ծառայությունները պատշաճ մատուցելու նպատակով:

4.1.5. Սույն Պայմաններին միանալով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունը կարող է բացահայտել գաղտնի տեղեկատվությունն իր Գործընկեր կազմակերպություններին, եթե այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ծառայությունները պատշաճ մատուցելու նպատակով:

4.1.6. Ընկերությունն իրավունք ունի գաղտնի տեղեկատվություն բացահայտել երրորդ անձանց՝

4.1.6.1. Հաճախորդի գրավոր համաձայնության դեպքում,
4.1.6.2. կիրառելի օրենսդրությամբ տեղեկատվության բացահայտման պահանջ սահմանված լինելու դեպքերում, այդ թվում՝ օտարերկրյա օրենսդրությամբ պարտադիր բացահայտման պահանջի դեպքում, եթե ծառայությունների մատուցման արդյունքում կիրառելի է օտարերկրյա օրենսդրությունը,
4.1.6.3. ՀՀ կենտրոնական բանկին և պետական մարմնին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4.1.7. Սույն բաժնով սահմանված դրույթները կշարունակեն գործել Պայմանագրի դադարեցումից հետո՝ 10 (տասը) տարի ժամկետով:

## Բաժին 5. ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

5.1.1. Ընկերության կողմից մատուցվող բրոքերային և պահառության ծառայությունների համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա գումարների չափերը սահմանվում են Գլխավոր տնօրենի կողմից հաստատվող Սակագների համաձայն, որոնք մշտապես հասանելի են Կայքում և Ընկերության գրասենյակում և հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մասը:

5.1.2. Էլեկտրոնային առևտրային հարթակով ծառայությունների մատուցման դեպքում Ընկերության կողմից սահմանված Սակագին չլինելու դեպքում Հաճախորդը ծառայությունների դիմաց վճարում է Էլեկտրոնային առևտրային հարթակում մինչև գործարքի իրականացումը ցուցադրվող սակագներին համապատասխան:

5.1.3. Ծառայությունների մատուցման դիմաց Ընկերությունը, համաձայն Սակագների, անակցեպտ կարգով գանձում է միջնորդավճար Հաճախորդի հաշվից:

5.1.4. Ընկերության կողմից հանձնարարականների կատարման հետ կապված վերջինիս կրած բոլոր գործառնական ծախսերը, այդ թվում՝ առևտրային համակարգերի և գործակալների կողմից գանձվող ծախսերը (բացառությամբ Գործակալների հետ կնքված պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող մշտական և սովորական միջնորդավճարների), որոնք տարբեր են՝ կախված ԱՀ-ից, գործարքի տեսակից, ծավալից և այլ հանգամանքներից, ենթակա են Հաճախորդի կողմից փոխհատուցման՝ դրանց փաստացի արժեքի չափով առանց Հաճախորդի նախնական համաձայնության: Նման ծախսերը չեն ներառվում Սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են թե՛ նշված ծախսերը և թե՛ դրանց հատուցման համար Ընկերության կողմից իրականացված գանձումներն ու պահումները:

5.1.5. Սակագները չեն ներառում առևտրային համակարգերի, բորսաների, պահառուների, ռեեստրավարների և այլ անձանց կողմից գանձվող միջնորդավճարները (բացառությամբ քլիրինգային վճարների), որոնք, ի հայտ գալու դեպքում, գանձվում են Հաճախորդի միջոցներից:

5.1.6. Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով գործարքներ կնքելու հանձնարարականներն ի կատարումն փոխանցելու, ինչպես նաև այդ հանձնարարականներն ի կատարումն վերափոխանցող և կատարող Գործակալներին նրանց կողմից մատուցվող ծառայությունների համար Հաճախորդը Ընկերությանը վճարում է միջնորդավճարներ:

5.1.7. Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով ցանկացած գործարքի կնքում հնարավոր է  այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվին առկա են այդպիսի գործարքի կնքման արդյունքում առաջացող և Հաճախորդի՝ արդեն իսկ առկա դրամական և արժեթղթերով պարտավորությունները կատարելու համար բավարար Միջոցներ:

5.1.8. Էլեկտրոնային առևտրային հարթակով ծառայությունների մատուցման պարագայում Հաճախորդը վճարում է արտարժույթի երկար կամ կարճ դիրքերի հաջորդ օր (օրացուցային) տեղափոխման համար միջնորդավճար (overnight commission), որի դրույքաչափը տեսանելի է էլեկտրոնային առևտրային հարթակում: Ընդ որում՝ յուրաքանչյուր ուրբաթ օր տեղափոխման միջնորդավճարը գանձվում է երեք օրվա համար (ուրբաթ, շաբաթ, կիրակի), իսկ ԱՀ-ի ոչ աշխատանքային օրերի դեպքում՝ նաև այդ օրերի համար:

5.1.9. Ծածկույթը դրամական միջոցների դեպքում ապահովվում է էլեկտրոնային առևտրային հարթակի  միջոցով չբավարարող դրամական միջոցների օգտագործման հնարավորություն տրամադրելու միջոցով:

5.1.10. Ծածկույթն Ֆինանսական գործիքների (Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքների) դեպքում ապահովվում է որպես գործարքի առարկա Ֆինանսական գործիքների չբավարարող մասին Շուկայական գնով համարժեք դրամական միջոցների օգտագործման հնարավորության տրամադրում՝ համապատասխան գնանշման արժույթով:

5.1.11. Ծածկույթի ապահովման դիմաց հատուցման դրույքը սահմանվում է Ծածկույթի գումարը հասանելի դարձրած Գործակալի սակագներին համապատասխան:

5.1.12. Ծածկույթի ապահովման դիմաց հատուցման սակագինը որոշվում է տվյալ գործարքի կնքման օրվանից մինչև Բրոքերային հաշվին Ծածկույթի վերադարձման օրը հաշվարկված օրացուցային օրերի հաշվարկով:

5.1.13. Ընկերության նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները, այդ թվում՝ Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունները, ծագում են Հաճախորդի կողմից Էլեկտրոնային առևտրային հարթակի շահագործման համապատասխան գործողություն կատարելու պահից (համապատասխան ընտրված գործառնության կատարում/կոճակի սեղմում), ընդ որում Գործարքի և Ծածկույթի տրամադրման դեպքում՝ համապատասխան Գործարքի և Ոչ բավարար ծածկույթով գործարքի փաստացի կնքման հետաձգված պայմանով: Որոշակի ԱՀ-ներում որոշակի Ֆինանսական գործիքների առքուվաճառքի հանձնարարականների առաքման փաստը ինքնին, առանց գործարքի փաստացի

կնքման պայմանի, առաջացնում է Հաճախորդի պարտավորություն՝ համապատասխան հանձնարարականը փոխանցելու ընտրված գործառնությունները Հաճախորդի կողմից իրականացնելու/կոճակը սեղմելու պահից:

5.1.14. Ընկերությունն իր կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների միջոցով իրականացրած արժեթղթերով գործարքներից և/կամ այդպիսի արժեթղթերով ստացված եկամուտներից գոյացող հարկային պարտավորությունների գծով հարկային գործակալ չի հանդիսանում և չի տրամադրում դրանց գծով հարկային խորհրդատվություն: Հաճախորդը սույնով հաստատում է, որ պատշաճ տեղեկացված է և համաձայն է, որ Հաճախորդն է կրում սույն կետում նշված իր հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը:

5.1.15. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ցանկացած և բոլոր դեպքերում, երբ Հաճախորդին ՀՀ տարածքից դուրս թողարկված (արտասահմանյան) արժեթղթերից եկամուտները համապատասխան արժեթղթերի թողարկողների կողմից վճարվել են կամ վճարվելու են նման եկամուտների մասով կատարված/կատարման ենթակա հարկային վճարների նվազեցմամբ:

5.1.16. Սույն պայմաններում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսները, տույժերն ու տուգանքները և Հաճախորդի՝ Ընկերության նկատմամբ ցանկացած այլ տեսակի պարտավորությունների գումարները Ընկերությունը պահում է Հաճախորդի կողմից իրեն տրամադրված միջոցներից և/կամ անակցեպտ կարգով գանձում է Բրոքերային հաշվից, իսկ Հաճախորդը պարտավոր է ապահովել համապատասխան միջոցների առկայությունը նշված հաշվին: Ընկերությունը հանձնարարականի կատարումից/հաղորդումից անմիջապես հետո գանձում է համապատասխան միջոցները Բրոքերային հաշիվներից:

## Բաժին 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1.1. Ընկերությունը, ի լրումն սույն Պայմաններով նախատեսված այլ պարտականությունների, պարտավոր է.

6.1.1.1. ձեռնարկել բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոններ՝ համաձայն իր մշակած պատվերների կատարման քաղաքականության: Ընկերությունը

Հաճախորդի պատվերը կատարելու համար ձեռնարկում է քայլեր լավագույն պայմանները որոշելու համար և փորձում ընտրություն կատարել իր հետ պայմանագիր կնքած գործակալների միջև՝ դրանով իսկ ընտրելով գործարքների կնքման վայրը, որի միջոցով պատվերի կատարման դեպքում Հաճախորդի համախառն ծախսերը կլինեն նվազագույնը,

6.1.1.2. բարեխղճորեն և պատշաճ կերպով մատուցել ծառայությունները՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր ֆիդուցիար պարտականություններին վերաբերող իմպերատիվ կանոնները.

6.1.1.3. Հաճախորդի պահանջով հայտնել վերջինիս հանձնարարականի կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը.

6.1.1.4. Հաճախորդին փոխանցել նրա կողմից տրված հանձնարարականների կատարման արդյունքում ստացված եկամուտը, ինչպես նաև Հաճախորդին պատկանող դրամական միջոցները և արժեթղթերը.

6.1.1.5. Հաճախորդի համար վարել առանձին արժեթղթերի հաշվառման հաշիվ.

6.1.1.6. Հաճախորդի հանձնարարականով տրված գործարքի չկատարման կամ մասնակի կատարման դեպքում համապատասխանաբար ամբողջությամբ կամ համապատասխան չափով վերադարձնել Հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը.

6.1.1.7. Հաճախորդի հանձնարարականի կատարման անհնարինության դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Հաճախորդին.

6.1.1.8. Հաճախորդին պարբերաբար ներկայացնել հաշվետվություններ՝ սույն Պայմանների համաձայն.

6.1.1.9. Պայմանների համաձայն պահպանել Գաղտնի տեղեկատվության գաղտնիությունը,

6.1.1.10. ձեռնարկել միջոցներ Հաճախորդի կողմից փոխանցվող տվյալների, այդ թվում՝ անձնական տվյալների գաղտնիությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով.

6.1.1.11. Պայմաններով սահմանված կարգով գրանցել Հաճախորդի հաշվում հաշվառված արժեթղթերի նկատմամբ իրավունքները.

6.1.1.12. Պայմաններով սահմանված կարգով Հաճախորդին տրամադրել Հաճախորդի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ կամ քաղվածքներ.

6.1.1.13. Պայմաններով սահմանված կարգով և դեպքերում մերժել Հաճախորդի ներկայացրած հանձնարարականի կատարումը՝ ներկայացնելով համապատասխան գրավոր հիմնավորում.

6.1.1.14. Փոխանցել տեղեկություններ և փաստաթղթեր թողարկողի կամ այլ պահառուի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուներին.

6.1.1.15. Ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ընդունել և քննարկել ծառայությունների վերաբերյալ Հաճախորդի կողմից ներկայացված բողոքները:

6.1.2. Ընկերությունը Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

6.1.2.1. Ընկերությունը Միջոցների ներքին առանձնացված հաշվառում ապահովելու նպատակով վարում է դրամական միջոցների և արժեթղթերի հատուկ ներքին առանձնացված հաշվառման (արտացոլման)՝ տարբեր արժույթներով արտահայտված գրանցումների համակարգ, որտեղ արտացոլվում են նշված դրամական միջոցների շարժը և մնացորդը: Համակարգը վարվում է բացառապես ներքին առանձնացված հաշվառման համար և նախատեսված չէ Միջոցների նկատմամբ սեփականության իրավունքներ ամրագրելու համար: Սույն կետում նշված համակարգը վարվում է նաև Ընկերության անվանատիրոջ հաշիվներում հաշվառվող Հաճախորդի արժեթղթերի շարժը և մնացորդը արտացոլելու համար,

6.1.2.2. Ընկերությունը ունի պատշաճ ներքին հսկողության համակարգ, կազմավորել է ներքին աուդիտի ստորաբաժանում, ում գործառույթների մեջ է մտնում Ընկերության գործառնական գործունեության հետ կապված ռիսկերի ուսումնասիրումը և աշխատակիցների կողմից պատահական սխալների և չարաշահումների ռիսկի նվազեցումը,

6.1.2.3. Ընկերությունը մշակել և կիրառում է պատվերների կատարման հստակ քաղաքականություն,

6.1.2.4. Ընկերությունը կիրառում է Ընկերության և Հաճախորդի, ինչպես նաև տարբեր Հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականություն:

6.1.3. Հաճախորդը, ի լրումն սույն Պայմաններով նախատեսված այլ պարտականությունների, պարտավոր է.

6.1.3.1. տեղեկացնել Ընկերությանը Պայմանագիրը կնքելու, արժեթղթերի հաշիվ բացելու և այլ գործառնությունների ընթացքում Ընկերությանը տրամադրված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին: Սույն կետում նշված տեղեկությունները չներկայացնելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին պատճառված վնասի համար,

6.1.3.2. Ընկերությանը տրամադրել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը, ներառյալ՝ լիազորագրեր,

6.1.3.3. Պահպանել ՀՀ օրենսդրությամբ, արժեթղթերի թողարկման և շրջանառության պայմաններով, Պայմաններով և Սակագներով սահմանված պահանջները,

6.1.3.4. արժեթղթերի վաճառքի հանձնարարական ներկայացնելիս Ընկերության մոտ իր արժեթղթերի/դեպո հաշվին ապահովել վաճառվող արժեթղթերի ծավալը,

6.1.3.5. վճարել մատուցված ծառայությունների դիմաց, ինչպես նաև հատուցել իր կողմից տրված հանձնարարականների կատարման ժամանակ Ընկերության կրած ծախսերը Պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով,

6.1.3.6. չհրաժարվել Ընկերության կողմից Հաճախորդի հանձնարարականի հիման վրա կատարված գործարքից,

6.1.3.7. պահպանել Պայմանագրի և Հաճախորդի հանձնարարականների հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը,

6.1.3.8. չփորձել կեղծել, փոփոխել, դեկոմպիլացնել կամ որևէ այլ կերպ փոխել կամ չարտոնված մուտք գործել Դիտարկման հարթակի կամ Էլեկտրոնային առևտրային հարթակի որևէ մաս, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Ընկերությանը, եթե նշված գործողություններից որևէ մեկը կատարվել է որևէ այլ անձի կողմից,

6.1.3.9. չվաճառել, չօտարել և այլ եղանակով հասանելի չդարձնել Դիտարկման հարթակի կամ Էլեկտրոնային առևտրային հարթակի նկատմամբ իր իրավունքները, Դիտարկման հարթակի կամ Էլեկտրոնային առևտրային հարթակի մուտք գործելու համար իրեն տրամադրված վավերապայմանները այլ անձանց, ինչպես նաև սույն կետի խախտման դեպքում իրեն հասցված վնասների դեպքում պահանջ չներկայացնել Ընկերությանը և հատուցել Ընկերությանը հասցված վնասները,

6.1.3.10. անհապաղ տեղեկացնել Ընկերությանը Դիտարկման հարթակում կամ Էլեկտրոնային առևտրային հարթակում չարտոնված մուտքի կամ որևէ այլ գործողության կատարման վերաբերյալ՝ այդ մասին տեղեկանալու դեպքում,

6.1.3.11. ծանոթանալ տվյալ ժամանակահատվածում գործող Սակագներին և Պայմաններին:

6.1.4. Ընկերությունն ու Հաճախորդը պարտավորվում են բարեխղճորեն համագործակցել Պայմանագրի կատարման շրջանակներում:

6.1.5. Հաճախորդն ի լրումն Պայմաններով նախատեսված այլ իրավունքների, իրավունք ունի.

6.1.5.1. ոչ բացառիկ, չփոխանցվող լիցենզիայով օգտագործելու Դիտարկման հարթակը՝ Պայմաններով նախատեսված կարգով.

6.1.5.2. Պայմաններով սահմանված կարգով Ընկերությանը ներկայացնել հանձնարարականներ.

6.1.5.3. հետ կանչել իր կողմից Ընկերությանը տրված հանձնարարականը՝ Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով.

6.1.5.4. Արժեթղթերով իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործառնություններ՝ Պայմանագրով և Պայմաններով սահմանված կարգով.

6.1.5.5. Հարցման միջոցով Ընկերությունից ստանալ արժեթղթերի տիրապետումից ծագող իրավունքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն.

6.1.5.6. Բողոքարկել ծառայության շրջանակներում գործառնությունների արդյունքները Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում.

6.1.5.7. Պայմաններով սահմանված կարգով պահանջել և ստանալ իր Հաշվի վիճակի և դրանում հաշվառվող արժեթղթերի, ինչպես նաև պահառուական գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ կամ քաղվածքներ:

6.1.6. Ընկերությունն ի լրումն Պայմաններով նախատեսված այլ իրավունքների, իրավունք ունի.

6.1.6.1. Պայմաններով սահմանված դեպքերում մերժել Հաճախորդի հանձնարարականի ընդունումը և հրաժարվել դրա կատարումից.

6.1.6.2. Հաճախորդի հանձնարարականների կատարման նպատակով իր հայեցողությամբ ներգրավել արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ իրավասու անձանց կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից.

6.1.6.3. այն դեպքում, երբ Ընկերությունն, իր հայեցողությամբ, որոշում է, որ Դիտարկման հարթակում կամ Էլեկտրոնային առևտրային հարթակում Հաճախորդի հաշիվն օգտագործվել է խարդախության, հանցագործության, օրենքների և կանոնակարգերի խախտման համար, կամ այլ կերպ օգտագործվել է որևէ կասկածելի գործունեության մեջ կամ չարտոնված մուտքի արդյունքում այլ անձանց կողմից, կասեցնել էլեկտրոնային ծառայությունների մատուցումը,

6.1.6.4. Հաճախորդի անունից և օգտին ստանալ Հաճախորդի հաշվում հաշվառված արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտներ և այլ վճարումներ,

6.1.6.5. Հաճախորդից գանձել ծառայությունների մատուցման դիմաց վճարումները, այդ թվում՝ անակցեպտ գանձում իրականացնելով:

6.1.7. Սույն բաժնով ներկայացված իրավունքները և պարտականությունները սպառիչ չեն և գործում են ի լրումն Պայմաններում և Պայմանագրում նախատեսված իրավունքների և պարտականությունների:

## Բաժին 7. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ,ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

7.1.1. Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով (օֆերտայի ակցեպտավորմամբ) և այդպիսով սույն Պայմաններն ընդունելով՝ ի լրումն Պայմանագրում նշված հավաստումների, Հաճախորդը հավաստում է, որ.

7.1.1.1. Հաճախորդը իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության /անձնական օրենքի/ համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել Պայմանագիրը, իր անունից ձեռք բերել իրավունքներ ու պարտականություններ,

7.1.1.2. Պայմանագիրը ստորագրող անձն իրավասու է ստորագրել/հաստատել այն Հաճախորդի անունից համաձայն կիրառելի օրենսդրության և Հաճախորդի կանոնադրության ու ներքին իրավական ակտերի (իրավաբանական անձի դեպքում), ինչպես նաև այդպիսի ստորագրությամբ/հաստատմամբ Հաճախորդի համար ստեղծել, փոփոխել ու դադարեցնել իրավաբանական ուժ ունեցող իրավունքներ ու պարտականություններ,

7.1.1.3. Պայմանագրի շրջանակներում օգտագործվող Հաճախորդի բոլոր միջոցները (արժեթղթերը և դրամական միջոցները) ստացվել են օրինական աղբյուրներից և ոչ մի կերպ կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ,

7.1.1.4. Բրոքերային ծառայությունների մատուցման պարագայում Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից գործարք կնքելու համար օգտագործվող և ստացվող միջոցները (արժեթղթերը և դրամական միջոցները) ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով:

7.1.2. Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով (օֆերտայի ակցեպտավորմամբ) և այդպիսով սույն Պայմաններն ընդունելով՝ Հաճախորդը հաստատում է, ընդունում և համաձայնվում, որ.

7.1.2.1. գիտակցում է, որ Ընկերության հարկային ռեզիդենտության վերաբերյալ, ինչպես նաև Ընկերության հարկային օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և փոխանցումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

ինչպես նաև իր և Ընկերության միջև կնքված (կնքվելիք) պայմանագրերով,

7.1.2.2. տալիս է իր համաձայնությունը Ընկերությանը՝ FATCA օրենսդրության պահանջների համաձայն մշակելու իր անձնական տվյալները (որոնք ներառում են՝ իր անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հարկ վճարողի նույնականացման համարը (TIN), հասցեն (գրանցման և փաստացի բնակության), հեռախոսահամարը), իսկ իրավաբանական անձ հաճախորդ լինելու դեպքում՝ նաև իրավաբանական անձին վերաբերող տվյալները (որոնք ներառում են՝ պետական գրանցման, հարկատուի նույնականացման համարի (TIN), իրական շահառուների հասցեների, հեռախոսահամարների տվյալները) և այլ հայցված տեղեկությունները, ինչպես նաև իր և իրավաբանական անձ հաճախորդի գործառնությունների, գործարքների, հաշիվների և ներդրումների մասին տեղեկատվությունը, որոնք համաձայն ԱՄՆ Հարկային օրենսգրքի գլուխ 4-ի անհրաժեշտ են ԱՄՆ հարկային ծառայության կողմից նախատեսված հաշվետովությունների ձևերը լրացնելու և հարկերը գանձելու համար, փոխանցելու (տրամադրելու, հասանելիությունն ապահովելու) ԱՄՆ Հարկային ծառայությանը (IRS) կամ)/ FATCA օրենսդրության պահանջների համաձայն ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին,

7.1.2.3. տալիս է իր համաձայնությունը, որ իր, իսկ իրավաբանական անձ հաճախորդ լինելու դեպքում՝ իրավաբանական անձ հաճախորդի մասին բանկային գաղտնիք կազմող և ծառայողական տեղեկատվություն համարվող տեղեկությունները հրապարակվեն երրորդ անձանց՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության, ՀՀ կառավարության և պետական իրավասու այլ մարմինների կողմից վավերացված և ՀՀ տարածքում կիրառման ենթակա օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով,

7.1.2.4. տեղեկացված է, որ իր միջոցները, այդ թվում՝ արժեթղթերը կարող են հաշվառվել անվանատիրոջ հաշվում կամ Ընկերության անունով բացված արժեթղթերի կամ բանկային հաշվում, ինչպես նաև գիտակցում է այդ հաշիվներում պահելու հետ կապված ռիսկերը,

7.1.2.5. տեղեկացված է, որ արժեթղթերում ներդրումները կարող են հանգեցնել ֆինանսական կորուստների.

7.1.2.6. տեղեկացված է իր միջոցները Ընկերության անունից գրավադրման կամ փոխառությամբ տրամադրելու հնարավորության մասին, ինչպես նաև պահառուի կողմից իր միջոցները որպես իր պարտավորության կատարումն ապահովող միջոց հաշվառելու հնարավորության մասին.

7.1.2.7. իրեն տրամադրվել են այն փաստաթղթերը և իրավական հիմքերը, որի համաձայն Ընկերությունն իրավասու է մատուցել Ծառայություններ, ինչպես նաև Ընկերության լիցենզավորած և գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները,

7.1.2.8. որ ծառայությունների դիմաց վճարները և ծառայությունները մատուցելու համար Ընկերության կրած այլ ծախսերը անակցեպտ կարգով Ընկերության կողմից գանձվում են իր Բրոքերային հաշվից.

7.1.2.9. գիտակցում է, որ Էլեկտրոնային առևտրային հարթակին հասանելիությունը կարող է ցանկացած պահի սահմանափակվել, դադարեցվել կամ ընդհատվել, ներառյալ պահանջարկի պիկի պահերին, շուկայի անկայունության, ծրագրային թարմացման, ընթացիկ սպասարկման կամ որևէ այլ պատճառով: Եթե Էլեկտրոնային առևտրային հարթակը որևէ պատճառով անհասանելի է, Հաճախորդը կարող է օգտագործել որևէ այլ միջոց Ընկերության հետ կապի համար, և Ընկերությունը կամ որևէ այլ երրորդ անձ պատասխանատվություն չի կրում Էլեկտրոնային առևտրային հարթակի գործողության խափանման, դադարեցման կամ ընդհատման պատճառով Հաճախորդին կամ երրորդ անձանց հասցված վնասների համար՝ անկախ դրա պատճառից, բացառությամբ եթե խափանումը տեղի է ունեցել Ընկերության դիտավորությամբ տեղի ունեցած գործողությունների արդյունքում.

7.1.2.10. որ Ընկերությունը պատասխանատվություն չի կրում վնասների համար՝ կապված Էլեկտրոնային առևտրային հարթակում Հաճախորդի կողմից սխալ մուտքագրված տվյալների հետ.

7.1.2.11. որ Ընկերությունն իրավունք ունի վստահելու, որ Էլեկտրոնային առևտրային հարթակում Հաճախորդի անձնական հաշվից տրված հանձնարարականները, ցուցումները կամ այլ գործողությունները կատարված են կիրառելի օրենսդրության համաձայն Հաճախորդի կողմից պատշաճ լիազորված անձի կողմից՝ նույնիսկ, եթե փաստացի դրանք կատարել է այլ անձ.

7.1.2.12. որ Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով Ընկերությանը ներկայացված բոլոր հանձնարարականները, հարցումները և այլ հրահանգները ունեն նույն ուժը, ինչ Պայմանագրով նախատեսված այլ ձևով ներկայացված լինելու դեպքում.

7.1.2.13. որ Պայմանագրում նշված ծանուցման միջոցներով տրամադրված հաղորդագրությունները, այդ թվում՝ հանձնարարականները, համարվում են պատշաճ՝ անկախ դրանց ստորագրված լինելուց,

7.1.2.14. որ լիարժեքորեն հասկանում է Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման՝ սույն Պայմաններով սահմանված նախապայմանները, ինչպես նաև գիտակցում է սույն համաձայնագրի համաձայն Ոչ բավարար

ծածկույթով գործարքների կնքման առանձնահատկությունները, Ֆինանսական գործիքի սովորական առքուվաճառքի (առանց Ոչ բավարար ծածկույթի) համեմատ առավել բարձր ռիսկի առկայության հանգամանքը, մասնավորապես վնասի/կորստի դեպքում դրա մեծացումը՝ Հաճախորդի պարտավորությունների գոյացման փաստը հաշվի առնելով, այդ թվում՝ որ հնարավոր է, որ Հաճախորդի կորուստները գերազանցեն ներդրված գումարը, որի դեպքում Հաճախորդը կրում է ամբողջական պատասխանատվություն թե կորստի, և թե մյուս կողմին պատճառված վնասների համար,

7.1.2.15. որ լիովին և ամբողջությամբ հասկանում է Էլեկտրոնային առևտրային հարթակը , դրա շահագործման կանոնները, դրա բոլոր գործիքները, դրանով ներկայացվող տեղեկատվությունից օգտվելու և այն հիմք ընդունելով գործարքների կնքման ռիսկը, դրա միջոցով Ֆինանսական գործիքներով առքուվաճառք իրականացնելու առանձնահատկությունները, Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով մուտքագրվող Հանձնարարականների տեսակները, դրանց առանձնահատկությունները և դրանք Էլեկտրոնային առևտրային հարթակ մուտքագրելու տեխնիկան ու հնարավոր հետևանքները,

7.1.2.16. որ Էլեկտրոնային առևտրային հարթակին հասանելիություն ապահովող և Էլեկտրոնային առևտրային հարթակով գործողություններ կատարելու համար օգտագործվող սարքավորումների և միջոցների (հեռախոս, պլանշետ, համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ, անջատման-միացման ստեղներ և այլն) շահագործմամբ, ինչպես նաև այդ սարքավորումների և դրանց պարագաների էլեկտրական սնուցման միջոցներով կամ դրանց միջամտությամբ իրականացված ցանկացած գործողություն (ստեղնաշարի, մկնիկի, սարքավորման ստեղնի ցանկացած սեղմում/քլիք և այլն)՝ անկախ այդ գործողության գիտակցված թե չգիտակցված, նախատեսված թե պատահական բնույթից, կարող է հանգեցնել Ֆինանսական գործիքներով գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և/կամ փոփոխման, Ծածկույթին, շուկայական տվյալներին և տեղեկատվական ծառայություններին Էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով Հաճախորդին հասանելիության ակտիվացման, ապաակտիվացման, դրանց ժամանակային ռեժիմի փոփոխման և այլ իրավական փաստերի՝ դրանցից բխող ֆինանսատնտեսական հետևանքներով, սույն համաձայնագրի և Ֆինանսական գործիքներով գործարքների պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ֆինանսական կորուստների, չնախատեսված ծախսերի, Հաճախորդի Ֆինանսական գործիքներով պարտավորությունների առաջացմանը: Սույն կետի համաձայն՝

էլեկտրոնային առևտրային հարթակով որևէ գործողություն իրականացնելու՝ սույն կետում նշված և ցանկացած այլ հետևանքների համար պատասխանատվություն է կրում բացառապես Հաճախորդը,

7.1.2.17. որ էլեկտրոնային առևտրային հարթակի հնարավորություններն ու գործիքները չօգտագործելու կամ սխալ օգտագործելու, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային հարթակում առկա տվյալները հիմք ընդունելով ներդրումային որոշումներ կայացնելու ռիսկը կրում է միայն ինքը, ուստի Ընկերությունը Հաճախորդի կողմից էլեկտրոնային առևտրային հարթակի շահագործման հետ կապված որևէ պատասխանատվություն և վնասի հատուցման որևէ պարտավորություն չի կրում,

7.1.2.18. գիտակցում է, որ Ֆինանսական գործիքներով առևտուրն իրականացվում է տեխնիկական միջոցներով, իսկ հասանելիությունն ապահովվում է համացանցի միջոցով և դրանց խափանումը կարող է հանգեցնել որոշակի վնասների, որոնց պատասխանատվությունը կրում է Հաճախորդը,

7.1.2.19. գիտակցում է, որ շուկայում գործող իրավիճակով պայմանավորված, առքի և վաճառքի պատվերի/հայտի դեպքում հնարավոր է ԱՀ-ը չկարողանա բավարարել պատվերի/հայտերի ամբողջական կատարումը,

7.1.2.20. գիտակցում է, որ շուկայում գործող իրավիճակով պայմանավորված գանձվող միջնորդավճարը կարող է ենթարկվել փոփոխությունների, որի մասին Հաճախորդը տեղեկանում է էլեկտրոնային առևտրային հարթակից նախապես՝ գործարք իրականացնելիս,

7.1.2.21. գիտակցում է Հաշվով որոշակի գործառնությունների կատարման անհնարինությունը՝ հաշվի առնելով արժեթղթերի պահառության գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ արտասահմանյան արժեթղթերով գրավի իրավունքի գրանցման կամ արգելադրման հանձնարարականները կարող են չկատարվել այդ արժեթղթերով առքուվաճառքի հանձնարարականների ընդունման, փոխանցման կամ կատարման համակարգի առանձնահատկությունների բերումով և դրա համար ինստիտուցիոնալ, կազմակերպչական, տեխնիկական և իրավական հնարավորությունների բացակայության պատճառով,

7.1.2.22. համաձայնվում է, որ էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով Հաճախորդին հասանելի բոլոր տեղեկությունները, շուկայական տվյալները (թե՛ իրական ժամանակում, թե՛ ուշացումով ընտրանքների դեպքում), այն է՝ Ֆինանսական գործիքների առուվաճառքի գնանշումները, տնտեսական, քաղաքական և այլ ընդհանուր բնույթ կրող և մասնավոր անձանց վերաբերող բոլոր նորությունները կրում են

բացառապես տեղեկատվական բնույթ, կարող են ունենալ ժամանակային, բովանդակային և/կամ այլ շեղումներ իրական ժամանակում կամ որևէ այլ պահի դրությամբ համապատասխան ԱՀ-ներում իրական տվյալներից և գնանշումներից, կարող են պարունակել տեխնիկական և թվաբանական անհամապատասխանություններ/անճշտություններ: Հաճախորդը դրանք օգտագործում է բացառապես իր ռիսկով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց հիման վրա Հաճախորդի ընդունած ներդրումային որոշումների և գործողությունների/անգործության բացասական հետևանքների և կորուստների համար,

7.1.2.23. ընդունում է և հաստատում է, որ տեղյակ է, որ միջազգային շուկաներում ծառայությունների մատուցումը կարգավորվում է նաև միջազգային իրավական նորմերով:

7.1.3. Ընկերությունը հավաստում և երաշխավորում է, որ

7.1.3.1. պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն իրավասու է կնքել սույն պայմանագիրը.

7.1.3.2. ունի Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ թույլտվությունները և լիցենզիաները.

7.1.3.3. Ընկերության անունից Պայմանագիրը ստորագրող անձն իրավասու է ստորագրել այն և այդպիսով Ընկերության համար ստեղծել Պայմանագրից բխող պարտավորությունները:

## Բաժին 8. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### 8.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1.1. Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրվող հաշվետվությունները տրամադրվում են հայերեն: Հաճախորդի ընտրությամբ հաշվետվությունները կարող են հայերենի փոխարեն տրամադրվել անգլերեն կամ ռուսերեն:

### 8.2. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.2.1. Ընկերությունը Հուսալի միջոցով և/կամ Հաճախորդի գրավոր պահանջի/պայմանավորվածության դեպքում՝ թղթային ձևով՝ Ընկերության գտնվելու վայրում Հաճախորդին ներկայացնում է ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) և պարբերական ամսական հաշվետվություններ (ըստ Հաճախորդի պահանջի)՝ ամսական մեկ անգամ (Հավելված 3):

8.2.2. Ընկերությունը Հաճախորդին հաշվետվությունները տրամադրում է՝

8.2.2.1. ամսական հաշվետվությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը,

8.2.2.2. ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) հաշվետվությունը՝ մինչև գործարքի կնքմանը հաջորդող Գործառնական օրվա ավարտը, բացառությամբ Առևտրային էլեկտրոնային հարթակի միջոցով ստացվող հաշվետվությունների, որոնք կարող են տրամադրվել ավելի ուշ, սակայն առաջին իսկ հնարավորության դեպքում՝ Առևտրային էլեկտրոնային հարթակի խափանման կամ պայմանների փոփոխման արդյունքում:

8.2.3. Ընկերությունը Հաճախորդին Հաշվետվություն է տրամադրում նաև ըստ Հաճախորդի պահանջի՝ դրանում նշված ժամանակահատվածի կտրվածքով՝ նման պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող երեք Գործառնական օրվա ընթացքում:

8.2.4. Ամսական հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե Հաճախորդը այն ստանալուց հետո հինգ օրացույցային օրվա ընթացքում գրավոր չի առարկում դրա բովանդակության վերաբերյալ: Ընթացիկ հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե Հաճախորդը այն ստանալուց հետո երկու Գործառնական օրվա ընթացքում չի առարկում դրա բովանդակության վերաբերյալ:

## 8.3. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.3.1. Հաճախորդի պահանջով Ընկերությունը տրամադրում է պահառուական հաշվով կատարված գործառնությունների հաշվետվությունը գործարքի կատարումից հետո և ամսական կտրվածքով:

8.3.2. Հաշվետվությունը պետք է պարունակի անհրաժեշտ վավերապայմաններ, որոնք թույլ են տալիս միանշանակ բացահայտել գործարքի նկարագիրը և արդյունքը: Մասնավորապես.

8.3.2.1. գործարքի տեսակը,

8.3.2.2. արժեթղթերի հաշվի համարը,

8.3.2.3. արժեթղթերի պետական գրանցման համարը,

8.3.2.4. անհատական ծածկագիրը:

8.3.3. Ելքագրված բոլոր հաշվետվությունները/քաղվածքները գրանցվում են Ընկերության հաշվետվությունների և քաղվածքների գրանցամատյանում:

8.3.4. Ընկերության կողմից բրոքերային ծառայությունների շրջանակում կատարված գործարքների հաշվետվությունները/քաղվածքները տրամադրվում են պահառուական գործառնության կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվան հաջորդող ամսվա ընթացքում, առձեռն՝ Ընկերության գործունեության վայրում կամ Պայմանագրում որպես հուսալի կապի միջոց նշված էլեկտրոնային հասցեով:

8.3.5. Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է հաշվից քաղվածքներ՝ նաև ըստ Հաճախորդի գրավոր պահանջի:

8.3.6. Հաճախորդն իրավունք ունի Ընկերության մոտ գործող իր արժեթղթերի հաշիվների վերաբերյալ ստանալ ցանկացած տեղեկություն, ներառյալ փակված հաշիվների վերաբերյալ՝ փակման պահից երեք տարվա ընթացքում:

## Բաժին 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

9.1.1. Ընկերությունը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար ՀՀ օրենսդրության, սույն Պայմանների և Պայմանագրի համաձայն:

9.1.2. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրում նշված իրենց երաշխիքների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս Կողմին այդպիսի երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը:

9.1.3. Կողմերը ազատվում են Պայմանագրով իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ Պայմանագրով տրված երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելը:

9.1.4. Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է հատուցել երրորդ կողմին պատճառված ցանկացած վնաս, եթե այդ վնասը առաջանալու պատճառներից է հանդիսացել Պայմանագրով տրված երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելը:

9.1.5. Ցանկացած դեպքում Ընկերության պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում նրան պատճառված իրական վնասի չափով:

9.1.6. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ գործարքների կնքման գործընթացում Ընկերության կողմից ներգրավված Գործակալների (ենթակոմիսիոներների) և/կամ Հաճախորդի միջոցները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նրանց կողմից գործարքներով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին:

9.1.7. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Ընկերության կրած ցանկացած վնաս, որը արդյունք է հանդիսացել Պայմանագրի և Կարգի համաձայն Ընկերության կողմից ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց կողմից Ընկերությանը ներկայացված պահանջների բավարարման, այդ թվում՝ էլեկտրոնային առևտրային հարթակի օգտագործման հետ կապված: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Ընկերության՝ Հաճախորդի

գործողություններով, այդ թվում՝ Հանձնարարականներով չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

9.1.8. Հաճախորդի Հանձնարարականներով կատարված գործարքների մյուս կողմի կողմից այդ գործարքով իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ռիսկը կրում է Հաճախորդը, իսկ Ընկերությունը հավաստում է, որ լավագույն ջանք կգործադրի՝ պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն նշվածի վերաբերյալ սույնով ոչ մի երաշխիք չի տալիս և պարտավորություն չի ստանձնում:

9.1.9. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ Հանձնարարականը կամ այլ հաղորդագրությունը իրեն առաքվել է Հաճախորդի անունից, սակայն դրա լիազորությունը չունեցող երրորդ անձանց կողմից, եթե ողջամիտ միջոցներ ձեռք առնելով Հաճախորդին անհատականացնող այլ տվյալների ստուգում (ծածկագրերի՝ հեռախոսային Հանձնարարականի դեպքում, իրավասու անձի ստորագրության և կնիքի առկայություն՝ թղթային հանձնարարականի դեպքում, սույն պայմանագրում նշված էլեկտրոնային հասցե՝ էլեկտրոնային հանձնարարականի դեպքում)՝ փորձել է ստուգել Հանձնարարական ներկայացնողի ինքնությունը և այդպիսի ստուգման արդյունքում ակնհայտ և միանշանակ պարզ չի եղել, որ Հանձնարարականն ուղարկվել է դրան չլիազորված անձի կողմից: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում մինչև 12.1.10. և 12.1.11. կետերում նշված ծանուցումը Հաճախորդից ստանալն Հաճախորդի որևէ վնասի կամ կորստի համար:

9.1.10. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի միջոցներով վերջնահաշվարկի չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Ընկերության դիտավորությամբ տեղի ունեցած գործողությունների արդյունքում:

9.1.11. Ի լրումն Պայմաններով նախատեսված այլ դրույթների, Ընկերությունը պատասխանատվություն չի կրում.

9.1.11.1. Պայմանների խախտմամբ տրված հանձնարարականի չկատարման արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար.

9.1.11.2. Հաճախորդի տված հանձնարարականների պատշաճ կատարման արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար.

9.1.11.3. Ծառայությունների մատուցման կապակցությամբ Ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղակի կամ անուղղակի ձևով մասնակցող երրորդ անձանց (ներառյալ առևտրային համակարգերի,

պահառուների, ռեեստրավարների, բրոքերների, բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների և այլ անձանց) գործողությունների կամ անգործության հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար, բացառությամբ եթե Ընկերությունը հնարավորություն ուներ ընտրելու Հանձնարարականները կատարող կամ հաղորդող Գործակալներին կամ մասնակցող երրորդ անձին և ընտրել է այնպիսի անձ, որի սնանկության/անվճարունակության կամ դրա անխուսափելիության մասին տեղյակ է եղել ինքը՝ այդպիսի ընտրություն կատարելիս.

9.1.11.4. Հաճախորդի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար.

9.1.11.5. Ընկերության տրամադրած վերլուծական կամ տեղեկատվական նյութերի հիման վրա Հաճախորդի կայացրած ներդրումային որոշումների արդյունքների համար.

9.1.11.6. Ընկերության կողմից չսպասարկվող տեխնիկական համակարգերի խափանման արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար.

9.1.11.7. Հաճախորդին թողարկողի կամ այլ անձանց կողմից տրամադրված տեղեկատվության հավաստիության և ճշտության համար.

9.1.11.8. Պայմանագրի ոչ պատշաճ կատարման համար, որը առաջացել է Հաճախորդի կողմից սխալ կամ ոչ ամբողջական տեղեկատվության տրամադրման կամ նման տեղեկությունների փոփոխության վերաբերյալ Ընկերությանը չծանուցելու հետևանքով

9.1.11.9. Էլեկտրոնային առևտրային հարթակի կողմից Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու արդյունքում Հաճախորդի կրած վնասի համար:

9.1.12. Կնքված գործարքների հետ կապված հաշվարկների գծով պարտավորությունների կետանցի դեպքում պարտավորությունը խախտող Կողմը մյուս Կողմի պահանջով կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

9.1.13. Տույժի վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումից:

9.1.14. Պայմանագրով սահմանված տույժի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող ընդհանուր պարտքի գումարը:

9.1.15. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Ընկերությանը Էլեկտրոնային առևտրային հարթակը ի շահ իրեն իր օրինական Միջոցների օգտագործմամբ Ֆինանսական գործիքներով առևտուր իրականացնելուց բացի այլ նպատակներով կամ միջոցներով օգտագործելու համար, այդ թվում՝ Էլեկտրոնային առևտրային հարթակին այլ անձանց հասանելիություն տրամադրելու, օրենքին հակասող

նպատակներով կամ անօրինական ճանապարհով ստացված Միջոցների օգտագործմամբ Ֆինանսական գործիքներով առևտուր իրականացնելու համար:

9.1.16. Էլեկտրոնային առևտրային հարթակի կողմից Դիրք(եր)ի ավտոմատացված փակումը տեխնիկական հնարավորություն է Հաճախորդի համար, սակայն չի հանդիսանում Ընկերության պարտականությունը: Եթե Էլեկտրոնային առևտրային հարթակի կողմից Դիրք(եր)ի ավտոմատացված փակում չի կատարվում, Հաճախորդը պատասխանատվություն է կրում դրա արդյունքում առաջացած իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

9.1.17. Էլեկտրոնային առևտրային հարթակով մատուցվող ծառայությունների որակի համար Ընկերությունը երաշխիքներ չի տալիս և պարտավորություն չի ստանձնում ապահովել Էլեկտրոնային առևտրային հարթակի գործառնության շարունակականությունը և պատշաճությունը:

9.1.18. Յուրաքանչյուր պահի դրությամբ Հաճախորդը ընդունում է Էլեկտրոնային առևտրային հարթակի աշխատանքը «ինչպես որ է» սկզբունքով, այն է՝ Էլեկտրոնային առևտրային հարթակի ցանկացած հնարավոր խափանում և/կամ դանդաղում ցանկացած պատճառով (բացառությամբ Ընկերության դիտավորյալ գործողությունների) ցանկացած պահի դրությամբ Հաճախորդն ընդունում է որպես Էլեկտրոնային առևտրային հարթակին բնորոշ հատկություն: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այդպիսի խափանումների և/կամ դանդաղումների համար: Այնուամենայնիվ, Ընկերությունը կգործադրի հնարավոր բոլոր ջանքերը/քայլերը նշված խափանումները և/կամ դրանց հետևանքները շտկելու գործում, որը սակայն չի հանդիսանում Ընկերության պարտավորությունը:

9.1.19. Պայմաններով նախատեսված գաղտնիության պահպանման պարտավորությունները խախտելու դեպքում՝ խախտող Կողմը պարտավոր է հատուցել մյուս Կողմի՝ այդպիսի տեղեկատվության բացահայտման արդյունքում կամ այդ առնչությամբ կրած ուղղակի վնասները:

## Բաժին 10. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

10.1.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Ընկերությունն ու Հաճախորդը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

10.1.2. Անհաղթահարելի ուժի արդյունք հանդիսացող իրավիճակներ են համարվում տարերային աղետները, վթարները, հրդեհները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, ռազմական գործողությունները, Պայմանագրում նշված գործունեության տեսակները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով արգելող և Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրենց

պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրական և նորմատիվ ակտերի, պետական մարմինների որոշումների (հրամանների) օրինական ուժի մեջ մտնելու փաստերը, կամ Կողմերի կամքից անկախ այլ իրադարձությունները:

10.1.3. Պայմանագրի այն Կողմը, որը չի կարող կատարել իր պարտականությունները՝ կապված անհաղթահարելի ուժի ազդեցության հետ, պարտավոր է այդ մասին, անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել մյուս Կողմին և կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի նվազեցվեն Կողմերի կրած վնասները:

10.1.4. Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է այն ժամանակին համաչափ, որի ընթացքում գործում անհաղթահարելի ուժը:

## Բաժին 11. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

11.1.1. Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով (օֆերտայի ակցեպտավորմամբ)՝ Հաճախորդը համաձայնում է Պայմաններով և Պայմանագրով նախատեսված ծառայությունների շրջանակում Ընկերության կողմից իր անձնական տվյալների մշակմանը, այդ թվում՝ օգտագործմանը, երրորդ անձանց փոխանցմանը ներառյալ, բայց չսահմանափակելով, փոխկապակցված անձանց, այլ ֆինանսական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին, ծառայություն մատուցողներին, և կարգավորող մարմիններին, եթե Ընկերությունը դա անհրաժեշտ է համարում արդյունավետ ծառայություններ մատուցելու նպատակով կամ տվյալ ծառայության և Հաճախորդի նկատմամբ կիրառելի օրենսդրության պահանջով նման փոխանցումը պարտադիր է:

11.1.2. Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով (օֆերտայի ակցեպտավորմամբ)՝ Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է Ընկերության կողմից հաստատված և Կայքում հրապարակված «Գաղտնիության քաղաքականության» հետ և համաձայնվում է և ընդունում այդ քաղաքականության դրույթները:

11.1.3. Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով (օֆերտայի ակցեպտավորմամբ) Հաճախորդը տալիս է իր անվերապահ համաձայնություն առ այն, որ Ընկերությունը իրեն նույնականացնելու, իր վերաբերյալ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և անձնական տվյալները կարող է հայցել երրորդ անձանցից, այդ թվում՝ պետական մարմիններից և իրավաբանական անձանցից:

## Բաժին 12. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

12.1.1. Ծառայությունների մատուցման նպատակով Ընկերությունը և Հաճախորդը տեղեկատվություն են փոխանակում հետևյալ կապի միջոցներով՝ հեռախոսային խոսակցություններ, էլեկտրոնային փոստ՝ ինտերնետային ցանցի կամ Ընկերության և Հաճախորդի միջև հաղորդակցությունը ապահովող այլ ցանցի, այդ

թվում օնլայն տեսազանգի միջոցով, բնօրինակ փաստաթղթերի փոստային/սուրհանդակային առաքում և առձեռն հանձնում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ: Հանձնարարականները ընդունվում են ի կատարում կամ ի հաղորդում կատարման համար, ինչպես նաև տեղեկատվությունը փոխանակվում է հեռախոսի, էլեկտրոնային փոստի, համացանցային (ինտերնետային ցանցի միջոցով աշխատող) տերմինալների (պլատֆորմների) և թղթային ձևով: Կողմերի ծանուցման և հաղորդակցման կապի միջոցների տվյալները նշվում են Դիմում-Պայմանագրում:

12.1.2. Ընկերության համար տեղեկատվության ցանկացած փոխանակում, հաղորդագրություն, փաստաթղթերի ներկայացում, փոխանցում, փոխանակում համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե առաքվել է հետևյալ միջոցներով.

12.1.2.1. Տրամադրվել է առձեռն, Ընկերության կողմից ստացման հավաստմամբ,

12.1.2.2. Ստացվել է հետևյալ էլեկտրոնային հասցեին. backoffice@cubeinvest.am,

12.1.2.3. Ստացվել է Փոստային կապի միջոցով հետևյալ հասցեում. ՀՀ, ք.Երևան,Վ. Սարգսյան 10, 0010,

12.1.2.4. Ստացվել է էլեկտրոնային առևտրային հարթակի հաղորդակցման գործիքի միջոցով:

12.1.3. Հաճախորդը համաձայնում է, որ ծառայությունների մատուցման նպատակով Դիմում-Պայմանագրում նշված միջոցներից ցանկացածը, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային հարթակի հաղորդակցման գործիքն իր համար հանդիսանում է կապի հուսալի միջոց, իսկ էլեկտրոնային փոստը՝ նախընտրելի եղանակ:

12.1.4. Ընդ որում՝ Դիմում-Պայմանագրով նշված հուսալի որևէ ձևով ուղարկված հաղորդագրության, այդ թվում՝ հաստատումների, համաձայնությունների, ծանուցումների, Հանձնարարականների, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթերի /ներառյալ՝ Պայմանագրի/ փոխանցումը կամ տրամադրումը Կողմերը համարում են պատշաճ ներկայացված ու նույնականացված նշված հաղորդակցման կապի միջոցով ուղարկված լինելու փաստով՝ անկախ ստորագրության առկայությունից: Կողմերն ընդունում են, որ նման կարգով ստացված հաղորդագրությունները, այդ թվում՝ հաստատումները, համաձայնությունները, ծանուցումները, Հանձնարարականները, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթղթերը /ներառյալ՝ Պայմանագիրը/ ունեն նույն իրավական նշանակությունը, ինչ դրանց ձեռագիր ներկայացվելու դեպքում: Սույն կետը չի խոչընդոտում Ընկերության ցանկության դեպքում օգտագործել գործարար շրջանառության մեջ օգտագործվող էլեկտրոնային ստորագրման միջոցներ (օրինակ՝ Docusign ծրագրով փաստաթղթերի ստորագրում), ինչի պարագայում Հաճախորդը ստորագրում է անհրաժեշտ փաստաթղթերը,

ընդունում է նշված էլեկտրոնային ստորագրությունը որպես պատշաճ և որ այն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ փաստաթուղթը ձեռագիր ստորագրելու դեպքում:

12.1.5. Ընկերությունը և Հաճախորդը ընդունում են, որ Դիմում-Պայմանագրով նշված ծանուցման և հաղորդակցման միջոցները համարվում են պատշաճ ծանուցում՝ Պայմանագրի և Պայմանների հետ կապված բոլոր հարաբերությունների կարգավորման շրջանակում:

12.1.6. Ընկերությունը և Հաճախորդը ընդունում են, որ Դիմում-Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեներից ստացված նամակները ստացող կողմը համարում է պատշաճ անձի կողմից ուղարկված՝ անկախ փաստացի ուղարկող անձից, իսկ հեռախոսահամարներին ուղարկված SMS հաղորդագրությունները՝ պատշաճ անձի կողմից ստացված:

12.1.7. Պայմանագրի և Պայմանների ներքո Հաճախորդի և Ընկերության կողմից միմյանց ուղարկված իրավական կարևորության ողջ հաղորդակցությունը և նամակագրությունը, համարվում է ուղարկված.

- 12.1.7.1. այն օրը, երբ Կողմը էլեկտրոնային նամակ է ուղարկել մյուս Կողմին, պայմանով, որ առաքման ձախողման վերաբերյալ հաղորդագրություն չի ստացվել, եթե այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով,
- 12.1.7.2. այն օրը, երբ փոստով կամ սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկող Կողմը ստանում է առաքման հաստատումը, եթե այն ուղարկվել է փոստով կամ սուրհանդակային ծառայության միջոցով,
- 12.1.7.3. այն օրը, երբ նամակն առձեռն հանձնվել է Կողմին,
- 12.1.7.4. այն օրը, երբ էլեկտրոնային առևտրային հարթակի հաղորդակցման գործիքով հաղորդագրությունը հասանելի է դարձել ստացողի օգտատիրոջ համար:

12.1.8. Ընկերությունը և Հաճախորդը պարտավորվում են միմյանց նախապես, առնվազն մեկ աշխատանքային օր առաջ, տեղեկացնել Դիմում-Պայմանագրում նշված հասցեների և այլ տվյալների փոփոխության մասին: Չտեղեկացնելու հետ կապված բոլոր ռիսկերը կրում է փոփոխության մասին չտեղեկացրած կողմը:

12.1.9. Հաճախորդի լիազորված անձի փոփոխության կամ նոր իրավասու/լիազորված անձի ավելացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել Ընկերությանն իր նոր կամ հավելյալ լիազորված անձի վերաբերյալ՝ նշելով, որ վերջինս հանդիսանալու է Հաճախորդի լիազորված իրավասու անձը՝ ներկայացնելով վերջինիս անձնական տվյալները (անձնագրի տվյալները) և իրավաբանական անձի գործադիր մարմնի հաստատմամբ՝ ստորագրությամբ և կնիքով հաստատված (իրավաբանական անձի դեպքում) կամ նոտարի կողմից հաստատված (ֆիզիկական անձ Հաճախորդի դեպքում)՝ լիազորված անձի ստորագրության նմուշները: Լիազորված անձը Հաճախորդի անունից իրավասու է հանդես գալ սույն Պայմանագրի շրջանակներում որևէ գործողություն կատարելու

համար միայն պատշաճ ձևակերպված (ֆիզիկական անձ Հաճախորդի դեպքում՝ նոտարական վավերացմամբ) լիազորագրի հիման վրա, որը պետք է ներկայացվի Ընկերությանը: Սույն կետը չի կիրառվում, եթե Հաճախորդը ֆիզիկական անձ է և ինքն է հանդես գալիս որպես իրավասու անձ Ընկերության հետ հարաբերություններում կամ, իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում՝ վերջինիս անունից հանդես է գալիս գործադիր մարմնի ղեկավարը:

12.1.10. Ընկերության կողմից սույն Պայմանների ներքո Հաճախորդին որևէ համակարգին հասանելիության տրամադրման դեպքում այդ համակարգի կանոններով մուտքը համարվում է Հաճախորդի պատշաճ նույնականացում և դրան հաջորդող հանձնարարականները համարվում են Հաճախորդի կողմից պատշաճ կարգով հաղորդված՝ անկախ մուտքը փաստացի իրականացրած անձի ինքնությունից, եթե մինչև այդպիսի մուտքը Հաճախորդը նախապես գրավոր չի տեղեկացրել Ընկերությանը Գործառնական օրվա ընթացքում, որ իրեն տրամադրված մուտքի համար անհրաժեշտ տեղեկատվությունը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել այլ անձանց՝ առանց Հաճախորդի թույլատվության:

12.1.11. Հաճախորդին անհատականացնող տվյալները կորցնելու, երրորդ անձանց, այդ թվում՝ Հաճախորդի աշխատակիցը հանդիսացող, սակայն հանձնարարական ներկայացնելու լիազորություն չունեցող անձանց ծածկագիրը հայտնի դառնալու պարագայում Հաճախորդը պարտավոր է անհապաղ ծանուցում ուղարկել Ընկերությանը նշված փաստերի վերաբերյալ, որի պարագայում Հաճախորդին՝ վերջինիս դիմումի հիման վրա, կտրամադրվեն նոր անհատականացնող տվյալներ: Մինչև համապատասխան ծանուցում ստանալը Հաճախորդի անունից Հանձնարարական ներկայացնողի կողմից ներկայացված տվյալների և Հաճախորդին անհատականացնող տվյալների համապատասխանության դեպքում Հանձնարարականը համարվում է ներկայացված Հաճախորդի իրավասու անձի կողմից և Ընկերությունը դրանք դիտարկում է որպես իրավասու անձի կողմից ներկայացված:

12.1.12. Փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանակումը իրականացվում են հայերեն լեզվով, կամ Պայմանագրում Ընկերության և Հաճախորդի մեջ որոշված այլ լեզվով (ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով):

12.1.13. Հաճախորդի իրավական կարգավիճակի վրա ազդող տեղեկատվության հրապարակումը Ընկերության ինտերնետային կայքում զուգորդվում է այդ մասին Հաճախորդին էլեկտրոնային փոստով ծանուցմամբ կամ էլեկտրոնային առևտրային հարթակով տեղեկացմամբ:

12.1.14. Պայմանների փոփոխությունների և լրացումների վերաբերյալ պատշաճ ծանուցում է համարվում նաև փոփոխված Պայմանները Կայքում հրապարակելը:

## Բաժին 13. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1.1. Պայմանների և Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և դրանք մեկնաբանվում են այդ օրենսդրության համաձայն:

13.1.2. Կողմերի միջև սույն Պայմանագրի գործողության կապակցությամբ առաջացած վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով: 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում՝ դրանք ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից:

## Բաժին 14. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

14.1.1. Պայմանների փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Ընկերության իրավասու մարմնի որոշմամբ՝ բաժնետերերի, խորհրդի կամ Ընկերության տնօրինության առաջարկով և/կամ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ծագող անհրաժեշտությունից ելնելով:

14.1.2. Պայմաններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ընկերության կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Հաճախորդին ծանուցելու պայմանով: Հաճախորդի համար տվյալ փոփոխությունն ուժի մեջ է մտնում փոփոխության մասին ծանուցելու և/կամ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում փոփոխված/լրացված Պայմանները հրապարակելու օրվան հաջորդող 21-րդ օրը:

14.1.3. Սույն Պայմանների բոլոր փոփոխությունները և լրացումները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

14.1.4. Հաճախորդի հետ Պայմաններով նախատեսված պայմաններից զատ հատուկ պայմանները փոփոխվում են Պայմանագրում նշված եղանակով:

14.1.5. Սակագները, որոնց համաձայն մատուցվում են ծառայությունները կարող են փոփոխվել միակողմանիորեն՝ Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից, ընդ որում՝ Սակագները բարձրացնող փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում փոփոխության մասին ծանուցելու և/կամ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում փոփոխված/լրացված Պայմանները հրապարակելու օրվան հաջորդող 21-րդ օրը, իսկ Սակագները մեղմացնող փոփոխություններն ու լրացումները՝ փոփոխության մասին ծանուցելու և/կամ Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում փոփոխված/լրացված Պայմանները հրապարակելու պահից, եթե փոփոխման որոշմամբ այլ ժամկետ չի սահմանվում:

14.1.6. Հաճախորդի հետ Պայմանագիրը Ընկերության նախաձեռնությամբ կարող է լուծվել Հաճախորդին այդ մասին առնվազն 10 (տասը) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով: Պայմանագիրը Հաճախորդի կողմից կարող է

միակողմանիորեն լուծվել՝ Ընկերությանը առնվազն 20 օր առաջ տեղեկացնելու պայմանով:

14.1.7. Պայմանագրի լուծման դեպքում Ընկերությունն ապահովում է Հաճախորդի դրամական միջոցների վերադարձը վերջինիս՝ այդ միջոցները փոխանցելով Հաճախորդի կողմից նշված հաշիվներին՝ օրենքով սահմանված ժամկետներում, իսկ արժեթղթերը կամ ածանցյալ ֆինանսական գործիքները կա՛մ փոխանցվում են Հաճախորդի նշած արժեթղթերի հաշվին, կա՛մ օրենքով սահմանված կարգով՝ հանձնարարականի հիման վրա իրացվում են շուկայում և վերածվում դրամական միջոցների, որոնք վերադարձվում են Հաճախորդին համաձայն սույն կետի: Սույն կետում նշված հանձնարարականը Հաճախորդը պարտավոր է տալ Պայմանագրի լուծումից կամ այլ հիմքով դադարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ և վճարել այդ հանձնարարականի կատարման համար: Հանձնարարականը չներկայացնելու դեպքում արժեթղթերը իրացվում են դրանց շուկայական իրացվելի գնով և ստացված գումարները փոխանցվում են Հաճախորդի՝ Պայմանագրում նշված հաշվեհամարին: Այն գործիքները, որոնք ենթակա չեն փոխանցման իրենց բնույթով ՝ հանձնարարականի հիման վրա կամ եթե Պայմանագրի դադարումից առնվազն երկու օր առաջ Հաճախորդի հանձնարարական տրված չէ՝ Ընկերության նախաձեռնությամբ, իրացվում են շուկայում և վերածվում դրամական միջոցների, որոնք վերադարձվում են Հաճախորդին համաձայն սույն կետի:

14.1.8. Եթե Պայմանագիրը լուծվել է Հաճախորդի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է հատուցել Ընկերությանը դրա լուծման հետևանքով սույն բաժնի համաձայն անհրաժեշտ դարձած գործողությունների հետ կապված ծախսերը:

14.1.9. Պայմանագրի դադարեցումը չի ազատում Ընկերությանը և Հաճախորդին մինչ այդ ստանձնած պարտավորությունների կատարումից:

## Բաժին 15. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1.1. Պայմանների կամ Պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների անվավերության:

15.1.2. Պայմանները պետք է վերանայվեն Ընկերության գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ:

15.1.3. Պայմանների սույն խմբագրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և փոխարինում է «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ընդհանուր ժողովի 15 օգոստոսի 2024թ թիվ 2024/15 որոշմամբ ընդունված ««ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ Բրոքերային ծառայության մատուցման կարգը» և ««ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ Արժեթղթերի ռեեստրի վարման և պահառության ծառայությունների մատուցման կարգը» կարգերը և համարվում այդ կարգերի նոր՝ միասնական խմբագրություն: Ընդ որում՝ սույն Պայմանները կարգավորում են Ընկերության կողմից ուղղակիորեն (ոչ որպես հաշվի օպերատոր) պահառության ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները: Մինչ սույն Պայմանների ուժի մեջ մտնելն Ընկերության առկա

Հաճախորդների համար Պայմաններն ուժի մեջ են մտնում Կայքում հրապարակմանը հաջորդող 21-րդ օրը:

15.1.4. Պայմանները ենթակա են հրապարակման Կայքում: Պայմանները հաստատելուն հաջորդող տաս օրվա ընթացքում ենթակա են ներկայացման ՀՀ կենտրոնական բանկ:

Հավելված 1

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

1. Սույն հայտարարագիրը ներառում է ռիսկերի նկարագրությունը, որոնք կարող են ի հայտ գալ ֆինանսական շուկայում գործունեության ժամանակ:
2. Սույն հայտարարագրում օգտագործվող հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից հաստատված Բրոքերային ծառայությունների մատուցման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանված և դրանցում կիրառվող իմաստը, եթե այլ բան ակնհայտորեն և միանշանակորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից: Սույն հայտարարագրի դրույթները մեկնաբանելիս գերակա են Կարգով սահմանված հասկացությունները:
3. Այլ հասկացությունները, որոնք օգտագործվում են սույն հայտարարագրում, սակայն սահմանված չեն սույն հայտարարագրի 2-րդ կետում նշված ակտերում, մեկնաբանվում են՝ հիմնվելով դրանց կիրառման գործարար շրջանառության սովորույթների և միջազգային փորձի վրա:
4. Հաճախորդի կողմից սույն հայտարարագրին ծանոթանալու փաստը հավաստվում է Ընկերության հետ Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագրի ստորագրմամբ: Հաճախորդը գիտակցում և ընդունում է շուկայում Ֆինանսական գործիքներով գործունեության ընթացքում ներքոնշյալ հնարավոր ռիսկերը, ինչպես նաև այլ ռիսկեր, որոնք կարող են ծագել Ֆինանսական գործիքներում ներդրումների ժամանակ:
5. Ֆինանսական գործիքներում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:
6. Սույն հայտարարագրի իմաստով Ֆինանսական գործիքներով շուկայում գործունեության ընթացքում «ռիսկեր» հասկացությունը ներառում է որոշակի դեպքերի, իրավիճակների կամ գործընթացների ի հայտ գալու հնարավորություն, որոնք հանգեցնում են կամ կարող են բերել Հաճախորդի ակտիվների կորստի:
7. Սույն հայտարարագրի 6-րդ կետում նշված դեպքերի, իրավիճակների և գործընթացների բազմազանության պատճառով, սույն հայտարարագրում թվարկված ռիսկերն ամբողջական չեն և չեն բացահայտում ռիսկերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը՝ կապված Ֆինանսական գործիքներով շուկայում ներդրումների հետ: Սույն հայտարարագրի նպատակն է Հաճախորդին օգնել հասկանալու Ֆինանսական գործիքներով շուկայում ներդրումների հետ կապված ռիսկերը, դրանց ընդունելիության աստիճանի գնահատումը և սեփական ֆինանսական հնարավորությունների ու նպատակների իրական գնահատումը:

8. Սույն հայտարարագրի նպատակը Հաճախորդին արժեթղթերի շուկայում ներդրումներ կատարելուց հրաժարվելու հորդորը չէ, այլ օգնել Հաճախորդին, ճիշտ գնահատել ռիսկերն այդ գործունեության ոլորտում և պատասխանատվության բարձր զգացումով մոտենալ ներդրումային ռազմավարության որոշման հարցերին:
9. Ընկերությունը չի երաշխավորում եկամուտների ստացում Հաճախորդի համար, Ֆինանսական գործիքներով շուկայում Հաճախորդի հանձնարարականներով իրականացված գործարքներից: Հաճախորդը ինքնուրույնաբար է որոշում կայացնում Ֆինանսական գործիքներով շուկայում կատարված գործարքների և ներդրումային ռազմավարության ընտրության վերաբերյալ:
10. Ֆինանսական գործիքներով շուկայում գործարքները կարող են բերել ֆինանսական կորուստների: Նախորդ փորձն ու փորձառությունը չի երաշխավորում ապագայի ֆինանսական արդյունքներ: Այլ անձանց մոտ ֆինանսական հաջողությունները չեն երաշխավորում նույնպիսի արդյունքներ Հաճախորդի համար:
11. Ոչ բավարար ծածկույթով գործարքներով առևտրի (Margin Trading) պայմաններով գործառնությունների իրականացման ընթացքում գնի և փոխարժեքի՝ անգամ համեմատաբար փոքր տատանումները կարող են էապես անդրադառնալ հաճախորդի առևտրային հաշվի վրա, ինչը պայմանավորված է միջոցների փոխառման լծակի էֆեկտով: Շուկայի անբարենպաստ փոփոխությունների դեպքում հաճախորդը կարող է կրել վնասներ, որոնց չափը անսահմանափակ է և կարող է գերազանցել թե բրոքերային հաշվին սկզբնապես մուտքագրված գումարին և ցանկացած այլ լրացուցիչ գումարների, որոնք կարող են մուտքագրվել հաշվին բաց դիրքերի պահպանման համար:
12. Բոլոր ռիսկերի գնահատման, ֆինանսական ռեսուրսների օգտագործման և առևտրային ռազմավարության ընտրության ողջ պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

**Ներդրումների հետ կապված ռիսկերի նկարագրությունը**

**Ըստ ներդրողի և ռիսկի աղբյուրի կապի.**

- անմիջական – ռիսկի աղբյուրն իրավական հարաբերություններով ուղղակիորեն կապված է ներդրողի հետ:
- միջնորդավորված – ռիսկի աղբյուրն իրավական հարաբերություններով անմիջականորեն կապված չէ ներդրողի հետ, սակայն ռիսկի աղբյուրի մոտ անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալն իր հետևից առաջացնում է իրար հաջորդող իրադարձությունների շղթա, որն էլ վերջին հաշվով, հանգեցնում է ներդրողի միջոցների և/կամ եկամտի կորստի:

**Ըստ ռիսկի գործոնների.**

- **Տնտեսական** և շուկայական- անբարենպաստ տնտեսական կամ շուկայական իրադարձությունների ի հայտ գալու ռիսկ: Անհրաժեշտ է նշել հետևյալ տնտեսական և շուկայական ռիսկերը՝ տոկոսադրույքի, գործընկերոջ կողմից իր պարտականությունների չկատարում և դրա հետ կապված կորուստներ ներդրողի մոտ, օրինակ՝ դեֆոլտ, արժեթղթերի գնորդի անվճարունակությունը, թողարկողի անվճարունակությունը, Ընկերության անվճարունակությունը, շուկայում գների, փոխարժեքի և տոկոսադրույքների տատանումը և այլն.
- **իրավական** փոփոխությունների ռիսկ՝ արժեթղթերում ներդրումներից հնարավոր կորուստների առաջացում՝ կապված նոր օրենսդրական ակտերի ընդունման կամ էական օրենսդրական ակտերի (այդ թվում՝ նաև հարկային) փոփոխության հետ: Օրենսդրական ռիսկը ներառում է նաև արժեթղթերի շուկայի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի բացակայությամբ պայմանավորված կորուստների հնարավորությունը: Իրավական ռիսկերը ներառում են նաև արժեթղթերի կառուցվածքային ռիսկերը, որոնք կապված են արժեթղթերի առանձնահատկությամբ կամ թողարկման և տեղաբաշխման պայմաններով: Օրինակ՝ արժեթղթերի՝ վաղաժամկետ կամ հաճախորդի համար անբարենպաստ պայմաններով մարում կամ թողարկողի իրավունքների լայն շրջանակ՝ կապված այդ պայմանների վերանայման հետ: Իրավական ռիսկերը ներառում են նաև արժեթղթերի ապացուցակումը և թողարկողի անվճարունակությունը.
- **սոցիալ-քաղաքական** – պետությունում քաղաքական և տնտեսական արմատական փոփոխությունների ռիսկ (հատկապես երկրի քաղաքական ղեկավարության և այլ մարմինների փոփոխություն), սոցիալական անկայունության ռիսկ (այդ թվում՝ նաև գործադուլներ), ռազմական գործողությունների ռիսկ, ձեռնարկությունների ազգայնացման ռիսկ, հսկվող ձեռնարկությունների և բնական մոնոպոլիաների գործունեության պետական միջամտության ռիսկ (այդ թվում՝ սակագների կարգավորման ճանապարհով).
- **քրեական** – հակաօրենսդրական գործողությունների հետ կապված ռիսկ, օրինակ՝ փաստաթղթային տեսքով թողարկված արժեթղթերի կեղծում, խարդախություն, անթույլատրելի մուտք համակարգչային համակարգեր և այլն: Ներդրողի համար այն հանդիսանում է միջնորդավորված:
- **գործառնական** (տեխնիկական, տեխնոլոգիական, կադրային) – տեղեկատվական, էլեկտրական և այլ համակարգերի անսարքության կամ շուկայի ոչ կատարյալ ենթակառուցվածքով պայմանավորված (այդ թվում՝ գործառնությունների իրականացման տեխնոլոգիաների, կառավարման, հաշվառման և հսկման գործընթացների կամ անձնակազմի

գործողության/անգործության) սխալների պատճառով առաջացող ուղղակի կամ անուղղակի կորուստների ռիսկ: Կարելի է առանձնացնել գործառնական ռիսկի հետևյալ խմբերը՝

- տեղեկատվական ռիսկեր.
- էլեկտրական, կոմունիկացիոն համակարգերի օգտագործման ռիսկեր.
- անվանական արժեթղթերի հաշվառման համակարգի հետ կապված ռիսկեր.

- **տեխնոգեն** – մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացող ռիսկեր՝ վթարներ, հրդեհներ և այլն:
- **բնական** – ռիսկ, որը կախված չէ մարդու գործունեությունից, օրինակ՝ տարերային աղետներ՝ երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ և այլն:

Գործառնական ռիսկերի խմբում ներառվում է նաև լչերիջով գործարքների պարագայում Ընկերության կողմից հաճախորդի դիրքի հարկադիր փակման հետևանքով հաճախորդի կրած հնարավոր կորուստները:

**Ըստ Ֆինանսական գործիքների տեսակների.**

- **բաժնետոմս** - ընկերությունների բաժնետոմսերի հետ սովորական առուվաճառքի գործառնությունները համարվում են սահմանափակ ռիսկով գործառնություններ, այսինքն՝ հաճախորդի կորուստներ կրելու ռիսկը սահմանափակվում է նրա կողմից բաժնետոմսերով գործառնությունների կատարելու համար ծախսված գումարներով: Սակայն հարկ է հաշվի առնել, որ որոշակի հանգամանքներում կորուստները կարող են առաջանալ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում: Մասնավորապես, բաժնետոմսերի շուկայում առկա են ֆինանսական ռիսկեր, որոնք իրենցից ներկայացնում են ֆինանսական գործառնությունների ընթացքում առաջացող՝ շուկայական անբարենպաստ գործոններով պայմանավորված իրական վնասի ռիսկեր: Ֆինանսական ռիսկերը հետևյալն են. արժութային ռիսկ, իրացվելիության ռիսկ, գնային ռիսկ, թողարկողի անվճարունակության ռիսկ:
- **ֆյուչերս** - ֆյուչերսներում ներդրումներ կատարելու դեպքում առկա է կարճ ժամանակահատվածում մեծ գումարներ կորցնելու ռիսկ, ընդ որում հնարավոր կորուստների չափը անսահմանափակ է. կորուստները կարող են անգամ գերազանցել Ընկերության մոտ բացված հաշվին սկզբնապես մուտքագրված գումարը: Պատճառն այն է, որ ֆյուչերսների առքուվաճառքը ենթադրում է մեծ արժեք ունեցող ակտիվների գծով դիրք բացելու հնարավորություն համեմատաբար փոքր գումարներով, ինչը ստեղծում է թե նվազ միջոցներով առավել մեծ գումարներ շահելու հնարավորություն, և թե ներդրմանն անհամեմատ մեծ գումարներ կորցնելու ռիսկ: Եթե դուք վստահ չեք, որ

հնարավոր կլինի արդյոք կառավարել նշված բոլոր ռիսկերը, գերադասելի է ձեռնպահ մնալ արժեթղթերի ֆյուչերսների առքուվաճառքից:

- **օպցիոն** - Օպցիոնները նույնպես դասվում են ռիսկային ֆինանսական գործիքների շարքին, որոնցում ներդրումները և որոնցով գործառնությունները նույնպես ռիսկային են: Օպցիոնների առքուվաճառքին հատուկ ռիսկերը նույնպես ենթադրում են կարճ ժամանակամիջոցում մեծ կորուստներ կրելու հնարավորություն: Օպցիոն պայմանագիր ձեռքբերած անձը շատ կարճ ժամանակահատվածում կարող է կորցնել գնված առքի/վաճառքի օպցիոնի դիմաց վճարված ողջ գումարը կամ անսահմանափակ չափով կորուստներ կրել օպցիոնի կարճ վաճառքի հետևանքով: Այս ռիսկը պայմանավորված է օպցիոնի բնույթով, այն է՝ օպցիոնը հանդիսանում է արժեզրկվող ակտիվ, որն ունի գործողության սահմանափակ ժամկետ և այդ ժամկետը լրանալուց հետո կարող է ամբողջությամբ կորցնել իր արժեքը:
- **CFD (Contract For Difference)** – CFD-երը նույնպես դասվում են ռիսկային ֆինանսական գործիքների շարքին, որոնցում ներդրումները և որոնցով գործառնությունները նույնպես ռիսկային են: CFD-երի առքուվաճառքին հատուկ ռիսկերը նույնպես ենթադրում են կարճ ժամանակամիջոցում մեծ կորուստներ կրելու հնարավորություն: CFD պայմանագիր ձեռքբերած անձը շատ կարճ ժամանակահատվածում կարող է կորցնել գնված CFD-ի դիմաց ներդրված ողջ գումարը: Այս ռիսկը պայմանավորված է CFD ֆինանսական գործիքի բնույթով:
- **պարտատոմս** - թեև պարտատոմսերը դասվում են զգալիորեն ցածր ռիսկայնություն ունեցող գործիքների շարքին, սակայն ֆինանսական շուկայի բոլոր գործիքների նման այն նույնպես պարունակում է իրեն բնորոշ հիմնական ռիսկեր, որոնք են՝
  - Շուկայական ռիսկ.
  - Թողարկողի անվճարունակության ռիսկ.
  - Իրացվելիության ռիսկ և այլ ռիսկեր:

Հավելված 2

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՁԵՎ 1

Արժեթղթերի առքի/ վաճառքի պատվեր

Ում՝
«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ

Հեռ.: +374 11 800 810

________________________, այսուհետ՝ «Հաճախորդ», լիազորում եմ վաճառել/գնել հետևյալ արժեթղթերը___________________________________________________

Քանակով _______________________

Արժողությամբ _______________________

Սույնով թույլատրում և լիազորում եմ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ին մուտքագրել/ելքագրել նշված գումարը «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ -ում բացված « Հաճախորդ»-ի հաշվին/հաշվից:

Դրամական միջոցների փոխանցման համար հաճախորդի հաշիվ ______________________.

Սույնով լիազորում եմ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ին կատարել բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են սույն հանձնարարականի կատարման համար, ներառյալ գույքագրման հանձնարարականների և ցանկացած այլ փաստաթղթերի ստորագրումը՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի Դեպոզիտարիայում սույն Հաճախորդի անունով բացված դեպո հաշվից արժեթղթերի ելքագրման/մուտքագրման համար:

Հանձնարարականի և վերը նշված այլ իրավասությունների ժամկետ՝ «մինչև կատարում կամ չեղարկում»:

Ստորագրված է՝

Հաճախորդի ստորագրություն՝

……………………………………/ ________________________________________________________ /

*ստորագրություն* *ազգանուն անուն հայրանուն*

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՁԵՎ 2

# Միջոցների ելքագրման հանձնարարական/ Order to withdraw funds

Ամսաթիվ /Date ______________________

Հաճախորդի անվանում/Name/Full name of the Client ______________________

Խնդրում ենք փոխանցել / Please, withdraw funds

| Բրոքերային հաշվի համար /Brokerage account number | Հաճախորդի անվանում / Name/Full name of the Client | Գումար / Amount | Արժույթ/ Currency |
|---|---|---|---|
| | | | |

Ընդամենը / Total

Շահառու / Beneficiary ______________________

Հաշվի համար / Account No. ______________________

Շահառուի բանկ / Beneficiray Bank ______________________

Վճարման նպատակ / Payment Details ______________________

Հաճախորդ / Client: ________________________/_

*(ստորագրություն / անուն, ազգանուն / signature and full name)*

Հավելված 3

## ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Բրոքերային հաշվետվություն**

Հաճախորդի Անուն/Անվանում

Հաճախորդի հաշիվը

Հաշվետվության ժամանակահատված օր/ամիս/տարի - օր/ամիս/տարի

**Արժեթղթերի ազատ տեղաշարժ**

| Պատվերի ամսաթիվ | Գործարքի տեսակ | Թողարկողի անվանում | ISIN | Արժեթղթերի տեսակ | Քանակը (հատ) | Կատարման/ Գանձման ամսաթիվ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

**Արժեթղթերով կատարված գործարքներ**

| Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Թողարկողի անվանում | ISIN | Արժեթղթերի տեսակ | Քանակը (հատ) | Անվանական արժեք | Պարտատոմսերի գին (Անվանական %) | Կուտակված կուպոն | Բաժնետոմսի գին | Գործարքի/վճարման արժույթ | Գործարքի /վճարման ծավալ (առանց միջնորդավճարի) | Կատարման օր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | |

**Հաշվառված գործարքներ արժեթղթերի գծով**

| Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Թողարկողի անվանում | ISIN | Արժեթղթերի տեսակ | Քանակը (հատ) | Անվանական արժեք | Պարտատոմսերի գին (Անվանական %) | Կուտակված կուպոն | Բաժնետոմսի գին | Գործարքի/վճարման արժույթ | Գործարքի /վճարման ծավալ (առանց միջնորդավճարի) | Կատարման օր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | |

**Հաշվառմանը սպասող արժեթղթերով գործարքներ**

| Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Թողարկողի անվանում | ISIN | Արժեթղթերի տեսակ | Քանակը (հատ) | Անվանական արժեք | Պարտատոմսերի գին (Անվանական %) | Կուտակված կուպոն | Բաժնետոմսի գին | Գործարքի/վճարման արժույթ | Գործարքի/վճարման ծավալ (առանց միջնորդավճարի) | Կատարման օր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | |

**Արժեթղթերի մնացորդ**

| Թողարկողի անվանում | ISIN | օր/ամիս/տարի | | | | օր/ամիս/տարի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սկզբնական պլանային մնացորդ (քանակ) | Սկզբնական սառեցված մնացորդ (քանակ) | Սկզբնական հասանելի մնացորդ (քանակ) | Սկզբնական մնացորդ (քանակ) | Վերջնական պլանային մնացորդ (քանակ) | Վերջնական սառեցված մնացորդ (քանակ) | Վերջնական հասանելի մնացորդ (քանակ) | Վերջնական մնացորդ (քանակ) |
| | | | | | | | | | |

**Ածանցյալ գործիքներով կատարված գործարքներ**

| Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Ածանցյալ գործիքի անվանում | Հաշվառման կոդ | Ածանցյալ գործիքի տիպ | Քանակ (հատ) | Գին | Գործարքի/վճարման արժույթ | Գործարքի/վճարման ծավալ (առանց միջնորդավճարի) | Կատարման օր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |

**Հաշվառված գործարքներ ածանցյալ գործիքների գծով**

| Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Ածանցյալ գործիք | Հաշվառման կոդ | Ածանցյալ գործիքի տիպ | Քանակ (հատ) | Գին | Գործարքի/վճարման արժույթ | Գործարքի/վճարման ծավալ (առանց միջնորդավճարի) | Կատարման օր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | անվանում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |

**Հաշվառմանը սպասող ածանցյալ գործիքներով գործարքներ**

| Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Ածանցյալ գործիքի անվանում | Հաշվառման կոդ | Ածանցյալ գործիքի տիպ | Քանակ (հատ) | Գին | Գործարքի/վճարման արժույթ | Գործարքի/վճարման ծավալ (առանց միջնորդավճարի) | Կատարման օր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |

**Ածանցյալ գործիքների գծով մնացորդ**

| Ածանցյալ գործիքի անվանում | Հաշվառման կոդ | օր/ամիս/տարի | | | | օր/ամիս/տարի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սկզբնական պլանային մնացորդ (քանակ) | Սկզբնական սառեցված մնացորդ (քանակ) | Սկզբնական հասանելի մնացորդ (քանակ) | Սկզբնական մնացորդ (քանակ) | Վերջնական պլանային մնացորդ (քանակ) | Վերջնական սառեցված մնացորդ (քանակ) | Վերջնական հասանելի մնացորդ (քանակ) | Վերջնական մնացորդ (քանակ) |
| | | | | | | | | | |

**Արժեթղթերի պորտֆելի գնահատում**

| Թողարկողի անվանում | ISIN | Գնահատման արժույթ | օր/ամիս/տարի | | օր/ամիս/տարի | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Մուտքային պլանավորված դիրքի գնահատում | Մուտքային հասանելի դիրքի գնահատում | Ելքային պլանավորված դիրքի գնահատում | Ելքային հասանելի դիրքի գնահատում |
| | | | | | | |

**Արտարժույթով գործարքներ**

| Կնքման Ամսաթիվ | Գործարքի տեսակ | Հիմնական արժույթ | Գումարը հիմնական արժույթով | Փոխարժեք | Փոխհաշվարկի արժույթ | Գումարը փոխհաշվարկի արժույթով | Կատարման ամսաթիվ | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

**Դրամական միջոցների շարժ AMD**

| Գործարքի ամսաթիվ | Գործարքի տեսակ | Մուտք | Ելք | Մեկնաբանություն | Կատարման ամսաթիվ | Կարգավիճակ | Համարժեք AMD |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

**Դրամական միջոցների շարժ RUB**

| Գործարքի ամսաթիվ | Գործարքի տեսակ | Մուտք | Ելք | Մեկնաբանություն | Կատարման ամսաթիվ | Կարգավիճակ | Համարժեք AMD |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

**Դրամական միջոցների շարժ USD**

| Գործարքի ամսաթիվ | Գործարքի տեսակ | Մուտք | Ելք | Մեկնաբանություն | Կատարման ամսաթիվ | Կարգավիճակ | Համարժեք AMD |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

**Դրամական միջոցների շարժ EUR**

| Գործարքի ամսաթիվ | Գործարքի տեսակ | Մուտք | Ելք | Մեկնաբանություն | Կատարման ամսաթիվ | Կարգավիճակ | Համարժեք AMD |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

**Դրամական միջոցների մնացորդ**

| Արժույթ | օր/ամիս/տարի | | | | օր/ամիս/տարի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Սկզբնական պլանային մնացորդ | Սկզբնական սառեցված մնացորդ | Սկզբնական հասանելի մնացորդ | Սկզբնական մնացորդ | Վերջնական պլանային մնացորդ | Վերջնական սառեցված մնացորդ | Վերջնական հասանելի մնացորդ | Վերջնական մնացորդ |
| AMD | | | | | | | | |
| RUB | | | | | | | | |
| USD | | | | | | | | |
| EUR | | | | | | | | |

Գլխավոր տնօրեն ____________________________________

ստորագրություն

Կ.Տ.

օր/ամիս/տարի

Հավելված 4

**ԴԻՄՈՒՄ-ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Ֆիզիկական անձանց համար

## ԲԱԺԻՆ 1| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

| Անուն | Ազգանուն | Հայրանուն |
|---|---|---|
| | | |

| Անձնագրի համար/ նույն. քարտ | Տրվել է | Վավերական է մինչև | Ում կողմից է տրված | ՀԾՀ |
|---|---|---|---|---|
| | | | | |

| Գրանցման հասցե | Փաստացի բնակության հասցե | Փոստային հասցե (*եթե պարբերվում է բնակության հասցեից*) |
|---|---|---|
| | | |

| Ծննդյան օր, ամիս, տարի | Ծննդյան վայր (երկիր, քաղաք/համայնք/գյուղ) |
|---|---|
| | |

| Քաղաքացիություն[1] | 2-րդ քաղաքացիություն | Ռեզիդենտության երկիր[2] |
|---|---|---|
| | | |

| **Կապի միջոցներ.** | |
|---|---|
| Հասցե | |
| Էլ. հասցե | |
| Հեռ | |

## ԲԱԺԻՆ 2| ԳՈՐԾԱՐԱՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| **Զբաղվածություն** |
|---|

[1] Եթե առկա է 2-րդ քաղաքացիություն ևս, ապա գրառեք և ներկայացրեք նաև տվյալ անձնագիրը

[2] Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվել են 183 և ավելի օր:

| | | |
|---|---|---|
| ☐ Վարձու աշխատող<br>☐ Բաժնետեր<br>☐ Ուսանող | ☐ Գործազուրկ (լրացնել նախկին աշխատավայրը)<br>☐ Թոշակառու (լրացնել նախկին աշխատավայրը) | ☐ Ինքնազբաղ (մեկնաբանել)<br><br>☐ Այլ (մեկնաբանել) |

*Եթե վարձու աշխատող եք կամ ընկերության բաժնետեր:*

| Գործատու | Պաշտոն | Գործունեության ոլորտ/երկիր |
|---|---|---|
| | | |
| Նախորդ գործատու[3] | Նախորդ պաշտոն | Գործունեության ոլորտ/երկիր |
| | | |

| **Քաղաքական ազդեցություն ունեցող անձի կարգավիճակ (ՔԱՈՒԱ / PEP)[4]** | |
|---|---|
| Հանդիսանում եմ (հանդիսացել եմ) ՔԱՈՒԱ<br>☐ Այո<br>☐ Ոչ | Հանդիսանում եմ ՔԱՈՒԱ (նախկինում ՔԱՈՒ հանդիսացած անձի) ընտանիքի անդամ<br>☐ Այո<br>☐ Ոչ |

| **«Այո» պատասխանի դեպքում լրացրեք ներքոնշյալը** | | |
|---|---|---|
| Անուն Ազգանուն Հայրանուն | Զբաղեցրած պաշտոնը | Փոխկապակցվածության տեսակը |
| | | |

| **Արդյո՞ք փոխկապակցված եք որևէ իրավաբանական անձի հետ (հանդիսանում եք իրական շահառու, բաժնետեր, տնօրեն և այլն)** | |
|---|---|
| ☐ Այո ☐ Ոչ | |
| **«Այո» պատասխանի դեպքում լրացրեք ներքոնշյալը** | |
| Իրավաբանական անձի ամբողջական անվանումը | Փոխկապակցվածության տեսակը |
| | |
| | |

## ԲԱԺԻՆ 3 | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| **Եկամտի աղբյուրներ** | | |
|---|---|---|
| ☐ Աշխատավարձ<br>☐ Պարգևավճար | ☐ Թոշակ<br>☐ Ներդրումներից ստացվող | ☐Անշարժ գույքի վարձակալություն |

---

[3] Լրացվում է, եթե ներկա աշխատավայրում աշխատելու ժամկետը չի գերազանցում 3 տարին:

[4] Պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը)

| | | |
|---|---|---|
| ☐ Անշարժ գույքի վաճառք | ընթացիկ եկամուտ | ☐ Այլ (մեկնաբանել) |

| | |
|---|---|
| **Տարեկան եկամուտ**[5] | Արժույթը՝ ☐ ՀՀ դրամ ☐ ԱՄՆ դոլար ☐ Եվրո |
| | |

| | | |
|---|---|---|
| **Ակնկալվող ներդրումների ընդհանուր գումարը** | **Ներդրումների ակնկալվող ժամկետը** | **Գործարքների հիմնական ուղղություններ/երկրներ** |
| ☐0-50,000 ԱՄՆ դոլար<br>☐50,000-100,000 ԱՄՆ դոլար<br>☐100,000-300,000 ԱՄՆ դոլար<br>☐300,000-500,000 ԱՄՆ դոլար<br>☐ 500,000 ԱՄՆ դոլար և ավել | ☐ 0-1 տարի<br>☐ 1-3 տարի<br>☐ 3 տարի և ավել | ☐ ՀՀ<br>☐ ՌԴ<br>☐ԱՊՀ երկրներ<br>☐ ԵՄ երկրներ<br>☐ ԱՄՆ<br>☐Այլ |

| | |
|---|---|
| **Տվյալներ հիմնական բանկի վերաբերյալ** | **Այլ բրոքերային ընկերությունում հաշվի առկայություն** |
| Բանկի անվանում/երկիր | Բրոքերային ընկերության անվանում/երկիր |
| | |
| Բանկային հաշվեհամար[6], որից իրականացվելու է առաջին գործարքը | Բրոքերային հաշիվ, որից իրականացվելու է առաջին գործարքը |
| | |

| | |
|---|---|
| **Իրական շահառուի առկայություն** | |
| Գործարար հարաբերության մեջ առկա՞ է այլ իրական շահառու<br>☐ Այո[7] ☐ Ոչ | |
| **«Այո» պատասխանի դեպքում լրացրեք ներքոնշյալը** | |
| Անուն Ազգանուն Հայրանուն | Քաղաքացիություն |
| | |
| Լրացնել վերջինիս հետ կապվածությունը (ընտանիքի անդամ, ընկեր, գործընկեր, այլ) | |
| | |

**Լիազոր անձի առկայություն**

| |
|---|
| Արդյո՞ք առկա է լիազորված անձ |

[5] Մասնագիտական զբաղվածությունից, ինքնազբաղվածությունից, կենսաթոշակից, պարգևավճարներից կամ շահաբաժնից ստացված եկամուտ
[6] Պարտադիր է ոչ ռեզիդենտների դեպքում
[7] «Այո» պատասխանի դեպքում տրամադրել իրական շահառուի նույնականացման փաստաթուղթը

| ☐ Այո[8] ☐ Ոչ | |
|---|---|
| **«Այո» պատասխանի դեպքում լրացրեք ներքոնշյալը** | |
| Անուն Ազգանուն Հայրանուն | Քաղաքացիություն |
| | |
| Լրացնել հաճախորդի հետ կապվածությունը (ընտանիքի անդամ, ընկեր, գործընկեր, այլ) | |
| | |

## ԲԱԺԻՆ 4| ՀԱՐԿԱՅԻՆ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅՈՒՆ[9]

| Հարկային ռեզիդենտության երկիր | Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կամ համարժեք այլ համար | ՀՎՀՀ (դրան համարժեք համարի) բացակայության դեպքում դրա պատճառը (Ա կամ Բ) | Կենսական շահերի կենտրոն[10] |
|---|---|---|---|
| | | ☐Ա. տվյալ պետությունը ՀՎՀՀ կամ դրան համարժեք համար չի հատկացնում իր հարկային ռեզիդենտներին.<br>☐ Բ. հաշվետերը որևէ այլ պատճառով չի կարող ստանալ ՀՎՀՀ կամ դրան համարժեք այլ համար: Նկարագրե՛ք պատճառն այստեղ: | |

| **ԱՄՆ անձի կարգավիճակ** | **Այլ գործոններ** | |
|---|---|---|
| ☐ Հանդիսանում եմ ԱՄՆ հարկատու<br>☐ Չեմ հանդիսանում ԱՄՆ հարկատու | ☐ ԱՄՆ-ում ունեմ հեռախոսահամար կամ բնակության հասցե<br>☐ Առկա են իմ կողմից | ☐ Առկա է իմ հաշիվ(ներ)ը կառավարելու գործող լիազորագիր տրված ԱՄՆ-ում հասցե ունեցող անձի |

[8] «Այո» պատասխանի դեպքում տրամադրել լիազոր անձի նույնականացման փաստաթուղթը և լիազորագիրը:
[9] Խնդրում ենք ծանոթանալ հարցաշարի վերջում զետեղված «Լրացման ուղեցույց և ծանոթագրություն» բաժնին:
[10] Կենսական շահերի կենտրոնը այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը:

| | | |
|---|---|---|
| ☐ Ծնվել եմ ԱՄՆ-ում, սակայն չեմ հանդիսանում ԱՄՆ քաղաքացի կամ հարկատու[11] | տրված հանձնարարականներ ԱՄՆ-ում գտնվող իմ հաշվին պարբերաբար միջոցներ փոխանցելու համար | կամ ԱՄՆ հարկատուի<br>☐ Ունեմ այլ ուղղակի կամ անուղղակի կապ ԱՄՆ-ի հետ |

Եթե հանդիսանում եք ԱՄՆ հարկատու, անհրաժեշտ կլինի լրացնել W-9 ձևաթուղթը:

**Հաղորդակցման և հաշվետվությունների ստացման նախընտրելի լեզու.**

| | | |
|---|---|---|
| ☐ հայերեն. | ☐ անգլերեն. | ☐ ռուսերեն. |

## Բաժին 5| ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

☐ **Արժանահավատություն.** Հավաստիացնում եմ, որ վերոնշյալ տեղեկատվությունն ամբողջական է, ճիշտ և արժանահավատ: Հավաստում եմ, որ ամբողջական և ճշգրիտ է հարկային ռեզիդենտության և քաղաքացիության երկրների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը:

☐ **Իրական շահառու.** հայտարարում եմ, որ գործարար հարաբերության մեջ կամ գործարքում այլ իրական շահառու առկա չէ:

☐ **Փոփոխությունների վերաբերյալ տեղեկացում.** Պարտավորվում եմ գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության կամ շահառուի ի հայտ գալու դեպքում, հարկային ռեզիդենտության փոփոխության, ինչպես նաև նախկինում իմ կողմից տրամադրված վերոնշյալ տվյալների փոփոխության դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ քան փոփոխությունը տեղի ունենալուց հետո 30 օրվա ընթացքում, տեղյակ պահել «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ին (պետական գրանցման համար՝ 13, գրանցման ամսաթիվ՝ 03.02.2017թ., հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, ՀՎՀՀ՝ 02657619) (այսուհետ՝ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ) և ներկայացնել հավաստող փաստաթղթերը:

☐ **Տեղեկատվության տրամադրման թույլտվություն.** Տալիս եմ իմ համաձայնությունը, որ իմ՝ օտարերկրյա հարկային ռեզիդենտ հանդիսանալու դեպքում սույն հարցաշարում զետեղված, ինչպես նաև իմ հաշիվների վերաբերյալ որոշակի տեղեկություն կարող է փոխանցվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին, որն իր հերթին այդ տեղեկությունը կարող է փոխանցել այլ պետությունների հարկային մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության միջպետական պայմանագրերի հիման վրա և դրանցով սահմանված կարգով: Տալիս եմ իմ համաձայնությունը «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ին, որ իմ մասին բանկային կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակվեն երրորդ անձանց՝ Հայաստանի Հանրապետության, ՀՀ կառավարության և պետական իրավասու այլ մարմինների կողմից վավերացված և ՀՀ տարածքում կիրառման ենթակա օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև մշակվեն FATCA օրենսդրության պահանջների համաձայն:

☐ **Անձնական տվյալների մշակման թույլտվություն.** Համաձայն եմ Պայմանագրով մատուցվող ծառայությունների շրջանակներում «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից իմ անձնական տվյալների

[11] Ներկայացնել ԱՄՆ քաղաքացիությունից հրաժարվելու մասին տեղեկանք

մշակմանն, օգտագործման և փոխանցմանը, ծանոթացել եմ և համաձայն եմ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից հաստատված և Կայքում մշտապես տեղադրված «Գաղտնիության քաղաքականությանը»: Տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունն ու լիազորությունը «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ին Ծառայությունները մատուցելու նպատակով հայցել և ստանալ իմ անձնական տվյալները Ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ ծավալով երրորդ անձանցից:

☐ **Միացում պայմաններին, պայմանագրի կնքում.** Սույն Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով՝ ընդունում եմ և միանում եմ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ «ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ» (այսուհետ՝ «Պայմաններ»), որոնք ընդունվել են «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ իրավասու մարմնի կողմից և մշտապես հասանելի են «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ պաշտոնական՝ www.cubeinvest.am կայքում և գրասենյակում, և որ վերջիններս կազմում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը: Ընդունում և համաձայնվում եմ, որ «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ին Դիմում-Պայմանագիրը ներկայացնելով ակցեպտավորում եմ Պայմանները և Պայմանագիրը համարվելու է կնքված «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից Դիմում-Պայմանագրի ընդունման դեպքում՝ առանց իմ հավելյալ համաձայնության անհրաժեշտության: Պայմաններում հետագա ցանկացած փոփոխություն կամ լրացում, եթե այն կատարվել է դրանցում սահմանված փոփոխման կարգին համապատասխան, կհամարվի սույն Պայմանագրի անբաժանելի մաս:

☐ **Տեղեկացվածություն.** Պատշաճ կերպով ծանոթացել եմ Պայմաններին, իմ և «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ իրավունքներին և պարտականություններին, «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ ՝ ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող հասանելի այլ իրավական ակտերին, չունեմ դրանց հետ կապված որևէ հարց կամ առաջարկություն: Կարդացել և հասկացել եմ Պայմաններում զետեղված՝ արժեթղթերով գործառնությունների հետ կապված ռիսկերի մասին հայտարարագիրը: Գիտակցում եմ արժեթղթերով գործառնությունների հետ կապված իրական ռիսկերը և ընդունում եմ դրանք:

☐ **Հետևանքներ.** Գիտակցում եմ, որ գործող օրենսդրության, իմ և «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված (կնքվելիք) պայմանագրերի և սույն հարցաշարի համաձայն պատասխանատվություն եմ կրում կեղծ և գիտակցաբար սխալ տրամադրված տեղեկությունների համար: Գիտակցում եմ, որ իմ կողմից հարկային ռեզիդենտության վերաբերյալ ոչ ճիշտ կամ թերի տեղեկություն ներկայացնելու դեպքում «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կարող է դադարեցնել իմ հաշիվներով գործարքներ կատարել, բացառությամբ իմ անունով այլ հաստատությունում բացված հաշվին դրամական միջոցներ փոխանցելու կամ դրամական միջոցները ինձ տրամադրելու գործարքների:

☐ **ՀԿԴ հետ պայմանագիր**. համաձայնում և կնքում եմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի, «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի հետ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: Համաձայնում և կնքում եմ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ»:

*Դիմում-Պայմանագիրը լրացնելով՝ Հաճախորդը համաձայնում է, որ Դիմում-պայմանագրում լրացված տվյալների և դրան կից ներկայացված՝ համանման տեղեկատվությունը հավաստող փաստաթղթերում առկա տեղեկատվության միջև հակասության դեպքում «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն իրավասու է հիմք ընդունել փաստաթղթերում զետեղված տվյալները և իր կողմից հասցապվող Դիմում-Պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ բացառապես փաստաթղթերում ընդգրկված տեղեկատվությունը վերարտադրելով:*

| **ԲԱԺԻՆ 6| ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **Անուն ազգանուն** | |
| **Ստորագրություն** | |
| **Լրացման ամսաթիվ** | |

*Լրացվում է «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից*

Հաճախորդի Դիմում-Պայմանագիրը Պայմանների համաձայն ընդունվել է «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ կողմից և Պայմանագիրը կնքվել է ________________________________թ. հետևյալ համարով՝ ____________:

Հաճախորդի անունով «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ում բացվել է բրոքերային հաշիվ թիվ ________________ հետևյալ արժույթներով՝ AMD/USD/EUR/RUB:

Բրոքերային հաշիվը **ՀՀ դրամով** համալրելու նպատակով վճարման հանձնարարականում անհրաժեշտ է նշել՝

- Շահառու՝ Կուբ Ինվեսթ ՓԲԸ;
- Շահառուի բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
- Շահառուի հաշվի համար՝ 1570025547620100
- Նպատակ դաշտում՝ ____________________________(հաճախորդի անուն/ազգանունը), թիվ _____ բրոքերային հաշվի համալրում

**Այլ արժույթով** բրոքերային հաշիվը համալրելիս, խնդրում ենք կապ հաստատել backoffice@cubeinvest.am էլ. փոստի միջոցով՝ բանկային վավերապայմաններ ստանալու համար՝ նշելով, թե որ բանկից է կատարվելու փոխանցումը:

Միքայել Մարգարյան

Գլխավոր Տնօրեն

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ
պետական գրանցման համար 13
գրանցման ամսաթիվ 03.02.2017
ՀՎՀՀ 02657619
հասցե ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, 0010:

**Լրացման ուղեցույց և ծանոթագրություն**

